

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية المهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԶ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 1 - 2 (295 - 296) VOL. XXVI N° 1 - 2 السنة السادسة والعشرون - العدد الأول - الثاني

ՄԻԶ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ
36ՐԴ ՄԱՐԶԱՆԱԴԵՐ

ԳԱՆՏԱՏԱ



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԵՀՐԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Հ.Մ.Ա.Կ.Ի ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**



«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ ԿԱՐԴԱԼ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՐՈԹՈՔՈՒԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ»Ը



ՀՄ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության նախաձեռնությամբ, Յունուարին լոյս տեսաւ «Հ.Մ.Ը.Մ.ա-կան կենցաղագիտութեան

և փրոթոքոյային հասկացողու-թեան ուղեցոյց»ը, 32 էջով և գեղա-փիպ կողքով:
Երկար փարիներու անհրաժեշ-տութեան մը ծնունդը եղող այս «Ու-ղեցոյց»ը ունի երկու բաժին.-
Հ.Մ.Ը.Մ.ական փրոթոքոյային հասկացողութիւններ:
Հ.Մ.Ը.Մ.ական շքանշաններու կանոնագրութիւններ:
Փրոթոքոյային հասկացողու-թիւնները ներկայացուած են 11 էջով և երեք գլուխներով.- «Նախաբան», «Միութենական ներքին կեանքի փրոթոքոյային համակարգ» և «Միութենական արտաքին կեանքի փրոթոքոյային համակարգ»:
Նախաբանին մէջ կ'ըսուի, թէ «փրոթոքոյային ցուցմունքները կը թելադրուին Հ.Մ.Ը.Մ.էն ներս օրրսօրէ աճելու հսկամէք միութեան, ազգային և եկեղեցա-կան նուիրապետական կարգերը խախտող երեւոյթները կանխելու պահանջէն, ինչպէս նաեւ միութե-

նական մեր կենցաղավարութեան մէջ ամբողջական կարգապահու-թիւն հաստատելու կարեւորութիւնը շեշտելու մտահոգութենէն»:
«Ուղեցոյց»ին երկրորդ բաժինը կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառա-յութեան», «Արժանեաց» շքանշանը-ներու և «Արտակարգ» պատուանը-շանի կանոնագրութիւնները: Իբրեւ յաւելում, կը պարտին շքանշաննե-րու դիմումագիրներու օրինակներ:
«Մարզիկ»ի այս թիւով (էջ 4) տեսնել «Ուղեցոյց»ին «Նախա-բան»ը:
«ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՖՈՆՏԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
●Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Երր-ջանային Վարչութիւն՝
- 25ամեակի ձեռնարկին հա-սոյթը \$ 540
●Եղբ. Վահէ Զոքկարեան (Լիբանան) \$ 100



ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضیه شهریه تصددها جمعیه الهومنن الریاضی



5

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Կազմակերպչական 4
- Յուշեր 7
- Դաստիարակչական 10
- Պատմութեան էջերէն 12
- Ի Յուշ 18
- Մասնագիտական Մասնագիտական 20
- Մեր Կորուստները 33



30



26

ԲԱԺԻՆՆԵՐ

- Հայաստան 3
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայաստան 40

Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
 ԻՉ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 1-2 (295-296)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Արօ Մոսիկեան
 Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Տոքթ. Միսաք Արզումանեան,
 Պետրոս Շենմեան, Բիւզանդ
 Թորիկեան, Սալբի Լատոյեան
 եւ շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Զարեհ Զօրէքեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողմի Զեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան
 սակ ճշդուած է 35000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեանը
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՆԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՅԱՐԳԱՆՔ ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ

(«ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԾԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՈՎ)

Եթէ մարդու մը համար ապրիլը գոյութիւն ունենայ է, ապա մը համար ապրիլը կը նշանակէ տեւել, երկարաձգել կեանքը իրմէ անդին: Իսկ ապգերը կը տեսնեն մշակոյթով: Ուրիշ ամէն բան կրնայ մեծցնել կամ պղտիկցնել պանոնք, միայն մշակոյթն է որ կրնայ ապգ մը ապրեցնել իբրեւ ապգ:

Լեզուն առաջին օղակն է ազգային մշակոյթին: Առանց ազգային լեզուի չկայ ազգային մշակոյթ: Ուրիշը մարտնչանք ամերիկեան մշակոյթ է, Մայքրլ Առլէնը՝ անգլիական, Հանրի Թրուայան՝ ֆրանսական: Ազգային մշակոյթը կորուստի է, Նարեկացին է, Նահապետ Քուչակն է, Արմէնյանն է, Ահարոնեանն է, Վարուժանն է, Չարենցն է: Ազգային մշակոյթը Ռապմիկ Դաւոյեանն է:

Այսօր, երբ նոյնիսկ մեծ պետութիւններ իրենց ժողովուրդներուն կոչ կ'ուղղեն տէր կանգնելու իրենց ազգային լեզուին: Ու երբ այդ կոչին կարիքը կը զգացուի պետական կեանքի բոլոր բարիքները վայելող ժողովուրդներուն համար, մեր պարագային ա՛յլ աւելի հրամայական կը դառնայ հայ լեզուին պահպանումը, ոչ միայն խօսակցական մակարդակով, այլեւ՝ լայն հասկացողութեամբ, իր բառամթերքով, լեզուամտածողութեամբ, քերականութեամբ եւ դասական ուղղագրութեամբ:

Դէմ չենք օտար լեզուներու ծանօթացման եւ գործածութեան: Հայր իր պայմաններուն բերումով միշտ սորված ու խօսած է օտար լեզուներ, բայց ատիկա երբեք պատճառ եղած չէ ազգային լեզուին հանդէպ յարգանքի իր

պարտաւորութենէն զերծ մնալու: Նման բան կրնայ դաստիարակութեան, կրթութեան եւ ընթերցանութեան լուրջ պակասի հետեւանքը ըլլալ:

Երբ ժողովուրդ մը լեզուի մէջ կը նահանջէ, ապա ան կը նահանջէ ամէն բանի մէջ: Այսօր այբը մոռցողը, վաղը բենի ալ կը մոռնայ, մանաւանդ երբ հաշտուի մոռնալու գաղափարին հետ:

Յարգանքը լեզուին հանդէպ կը տանի մշակոյթի յարգանքին: Անդադար պէտք է կրկնել այս ճշմարտութիւնը:

Հետեւաբար, այս տարուան կարգախօսը պիտի ըլլայ հայերէն խօսիլ ու հայերէն գրել: Բայց մանաւանդ, լեզուի ճամբով պահպանել մեր ազգային մշակոյթը, ազգային ինքնութիւնը եւ նկարագիրը: Այսինքն՝ մնալ հայ եւ խանդավառուիլ հայկական արժէքներով:

Այս պարտքը կը դրուի իւրաքանչիւր հայու վրայ: Յարգանքը մեր լեզուին ու մշակոյթին հանդէպ կը պահանջուի բոլորէն, որովհետեւ պայքարը, զոր Սփիւռքի թէ Հայրենիքի մէջ կը մղենք՝ մեր այլասերման դէմ, համազգային նկարագիր ունի եւ կենաց մահու խնդիր է բովանդակ հայութեան համար:

Այսպէ՛ս միայն կարելի է պահպանել մեր լեզուն եւ տեսականացնել մեր ժողովուրդին գոյութիւնը:

Եթէ իւրաքանչիւր հայ գիտակցի այս իրողութեան՝ ապահով կրնանք ըլլալ մեր ապագայէն, այլապէս հարցը շատ աւելի ծանրակշիռ է՝ քան մենք կը կարծենք:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ Է ԱՐԺԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.Ի 90 ՏԱՐՈՒԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ»



Հայաստան - Սփիւռք Գ. խորհրդաժողովին Հ.Մ.Ը.Մ.Ի հանդէպ ցուցաբերուած վարկաբեկիչ եւ ընդվզեցուցիչ կեցուածքին ծանօթ են մեր ընթերցողները: Այդ մասին «Մարզիկ»-ի անցեալ թիւով հարցազրոյց մը կատարուած էր Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին հետ, ներկայացնելով պատահածը եւ ցաւ յայտնելով հայրենի իշխանութիւններուն այդ ուղղութեամբ ցարդ ունեցած լռութեան եւ անարարքերութեան համար:

Հարցազրոյցին յոյս ընծայումէն երկու շաբաթ ետք, եւ ի պատասխան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան 13 Հոկտեմբեր 2006 թուակիր բողոքի եւ ընդվզումի նամակին (կարդալ «Մարզիկ»-ի անցեալ թիւը, էջ 6), Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան ճամբով Հ.Մ.Ը.Մ. սրացաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար եւ խորհրդաժողովի նախապարտաւորող յանձնախումբի նախագահ Վարդան Օսկանեանէն ներողութեան նամակ մը, որ կատարուածին մէջ «որեւէ միտումնաւորութիւն» չգրանելով, Օսկանեան կը հաստատէ, որ Հ.Մ.Ը.Մ. «իր ծանրակշիռ ներդրումն ունի Սփիւռքում հայկական ոգու, ինքնութեան պահպանման, երիտասարդ սերնդի հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան գործում»:

Քովի սինակով նամակին ամբողջութիւնը:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ ԵՒ ԱՏԵՆԱՊԵՏ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏՉԵԱՆԻՆ

Սիրելի հայրենակիցներ,
Յարգելի պարոն Մկրտչեան,

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը եւ ես՝ անձամբ, մեծ յարգանքով եւ վերաբերում՝ Սփիւռքում գործող բոլոր կառոյցներին եւ, մասնաւորապէս, ծանրակշիռ աւանդ ունեցող կազմակերպութիւններին:

Բարձր գնահատանքի է արժանի Հ.Մ.Ը.Մ.ի 90 տարուայ գործունեութիւնը իր 99 մասնակիւդերով, աւելի քան 15.000 սկաուտներով, շուրջ 20.000 մարզիկներով եւ բազմահազար համակիրներով:

Գալով 2006 թ. Սեպտեմբերին Երեւանում կայացած Հայաստան-Սփիւռք երրորդ խորհրդաժողովի պաշտօնական բացմանը Ելույթ ունենալու մեր նախնական նամակ-հրաւերին, ապա ցանկանում եմ կրկին ներողութիւն խնդրել:

Ցանկանում եմ ընդունէք եւ հաւատաք, որ որեւէ միտումնաւորութիւն չի եղել Ձեր կազմակերպութեան նկատմամբ, ընդհակառակը՝ գիտակցում եմք, որ կազմակերպութիւնն իր ծանրակշիռ ներդրումն ունի Սփիւռքում հայկական ոգու, ինքնութեան պահպանման, երիտասարդ սերնդի հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան գործում:

Ինչպէս գիտէք, Սփիւռքի որեւէ մարմնակրթական կազմակերպութիւն չի ունեցել բացման Ելույթ: Այդ նամակը սխալմամբ էր ուղարկուել Ձեզ: Սակայն բոլորիդ հրաւիրում եմք մասնակցել յետ-խորհրդաժողովի գործունեութեանը:

Կից Ձեզ եմք ուղարկում այն նամակ-հրաւերը, որն ուղարկուել էր 2006 թ. Սեպտեմբերին Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովին մասնակցող կազմակերպութիւններին եւ ակնկալում եմք Ձեր արձագանգներն ու մասնակցութիւնը:

Մշտական համագործակցութեան պատրաստակամութեամբ,

Սիրով եւ յարգանքով՝
ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ

ՄԱՐՍԷՅԻ «ԱՐԾԻՒ»Ը ԿԸ ՎԵՐԱՄԻԱՆԱՅ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի տօնացոյցը նոր թուականով մը եւս հարստացաւ, երբ Մարսէյի «Արծիւ»ը 33 տարուան ընդմիջումէ ետք, 24 Յունւար 2007ին վերամիացաւ զինք ծնող միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին:

«Արծիւ»ի Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ընտանիքին վերամիացումը արդիւնքը եղաւ այս ուղղութեամբ թափուած երկարամեայ ճիգերու: 2006ի աշնան, «Արծիւ»ի անդամական ընդհանուր ժողովը վերատեսութեան ենթարկելով իր ներքին կանոնադրութիւնը՝ որոշեց նամակով մը վերամիացման դիմում կատարել Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ընդառաջելով դիմումին, 24 Յունւար 2007ին պաշտօնապէս ընդունեց Մարսէյի «Արծիւ»ին վերամիացումը, զայն հռչակելով միութեան 99րդ մասնաճիւղը:

Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ» հիմնուած է 1924ին, Պոլսոյ նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներէն՝ Վալզէն Անդրէասեանի, Սուքիաս Սուքիասեանի, Վահրամ Ասլանեանի, Մկրտիչ Փափապեանի եւ Օննիկ Սարաֆեանի կողմէ: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ, ան կէս դար գործած է հայանուէր առաքելութեամբ եւ զաղափարանուէր ընթացքով: 1974ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական Ժողովին, հակառակ իրենց ուղղուած հրաւերին, «Արծիւ»ի պատասխանատուները չեն մասնակցած ժողովին եւ կազմակերպականօրէն դուրս մնացած են Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն, մնալով հանդերձ ջերմ համակիր մը միութեան դաւանած ազգային արժէքներուն եւ սկզբունքներուն:

Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի յիսնամեայ գործունէութեան մասին տեսնել այս թիւին «Պատմութեան էջերէն» բաժինը (էջ 12-17):

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵՆՅԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՐՈԹՈՔՈՒԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՅՈՅՑ



ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքոյկով ներկայացուած փրոթոքոլային ցուցմունքները կը թելադրուին Հ.Մ.Ը.Մ.էն ներս օրըստօրէ աճելու հակամէտ միութեանական, ազգային եւ եկեղեցական նուիրապետական կարգերը խախտող երեւոյթները կանխելու պահանջէն, ինչպէս նաեւ՝ միութեանական մեր կենցաղավարութեան մէջ ամբողջական կարգապահութիւն հաստատելու կարեւորութիւնը շեշտելու մտահոգութենէն:

Փրոթոքոլային կարգերու անտեսումը մեր միութիւնը կ'առաջնորդէ դէպի ամբոխային եւ անիշխանական վիճակ,

մինչ անոնց հանդէպ ցուցաբերուած բժախնդրութիւնն ու յարգանքը անոր կու տան քաղաքակիրթ վարքով, ազգային հասարակական ընդունուած արժէքներուն գիտակից կազմակերպութեան մը վարկ: Կարգ ու կանոնի հանդէպ յարգանքը անվիճելի գրաւականն է մեր միութեան յառաջդիմութեան ու զօրացման: Ամէն երկիր ունի իր սահմանադրական օրէնքները, որոնց համաձայն կը ղեկավարուին ժողովուրդները, սակայն անոնք ունին նաեւ փրոթոքոլային կարգ ու սարք: Պատշաճութիւններու եւ պաշտօնական վերաբերումներու խախտումով եւ անտեսումով կը յառաջանայ անկազմակերպ երեւոյթ եւ կարգավիճակ:

Հ.Մ.Ը.Մ. ունի իր կանոնադիրը, որուն տրամադրութիւնները կարելի բժախնդրութեամբ կը գործադրուին միութեան կեանքէն ներս: Բայց կանո-

նադիրը փրոթոքոլային հասկացողութեամբ կանոններ չի բովանդակեր իր մէջ: Փոխադարձ յարգանքի արտայայտութիւնը ծնունդն է մեր կանոնադիրին պարտադրած օրէնքներուն եւ մեզի փոխանցուած է աւանդաբար, մեր նախորդող սերունդներէն:

Վերոյիշեալ մտահոգութիւններէն առաջնորդուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը անհրաժեշտ գտաւ ներկայ ուղեցոյցին պատրաստութիւնը, այն խոր համոզումով, որ անոր անթերի գործադրութիւնը, անկասկած, նոր վերելք մը պիտի ապահովէ միութեան:

Արդ, Հ.Մ.Ը.Մ.ի կենցաղավարական եւ փրոթոքոլային գոյգ հասկացողութիւնները ճշդորոշող ուղեցոյցը նպատակայարմար կը գտնենք ներկայացնել երկու ենթաբաժանումներով:

Առաջին՝ փրոթոքոլային ներքին համակարգ, որ կ'առնչուի միութեան ներքին օրկանական կեանքին:

Երկրորդ՝ փրոթոքոլային արտաքին համակարգ, որ կը հունաւորէ միութեան արտաքին կեանքին ընթացքը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Միջին Արևելքի վարչություններու խորհրդածողովին երկու ամիս ետք, 25-26 Նոյեմբեր 2006ին, Պեյրուսի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Միջին Արևելքի խմբապետական Ա. համագումարը, կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, մասնակցութեամբ՝ Լիբանանի, Սուրիոյ, Իրաքի եւ Քուէյթի շրջաններէն 16 խմբապետ-խմբապետուհիներու, որոնց եօթը՝ հիւրաբար:



Երկօրեայ նիստերով համագումարը քննեց միջազգային եւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկաւտութեան հետապնդած նպատակները, արժեւորում մը կատարեց սկաւտութեան անցեալի եւ ներկայի իրավիճակին, ապա օր-

ւան մարտահրաւերներուն անդրադառնալով՝ բնութագրում մը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի-ական տիպար խմբապետի հասկացողութեան:

Համագումարը քննեց նաեւ սկաւտական գիտելիքներու փոխանցման եղանակին կապուած հարցեր, ինչպէս նաեւ՝ խմբապետներու պատրաստութեան դասընթացքի մը գիտելիքներ:

16 խմբապետ-խմբապետուհիներու կողքին, համագումարին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Կարպիս Գապասագալեան, Պատրիկ Կիլպէնկեան, «Մարպիկ» խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան եւ Կեդրոնական Վարչութեան գործավար քոյր Վերա Բարսեղեան: Նիստերը վարեց Կեդրոնական Վարչութեան սկաւտականի պատասխանատու եղբ. Կարպիս Գապասագալեան: Կեդրոնական Վարչութեան կողմէ հրաւիրուած վաստակաւոր եօթը քոյրերն ու եղբայրներն էին՝ Արաքս Գուլաճեան, Լուսին Գալէպեան, Րաֆֆի Կէօփօլյանեան, Ներսէ Տօնիկեան, Վաչէ Նաճարեան (Լիբանան), Մանուկ Քէօզկէրեան եւ Քնար Քէօզկէրեան (Սուրիա):





ԱՐԾԱՐԾՈՒԱԾ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Իր տեսակին մէջ եզակի այս համագումարը բազմակողմանի քննարկման ենթարկեց սկաուտութեան կապուած գանազան հարցեր եւ իբրեւ ընդհանուր արժեւորում՝ հաստատեց, որ սկաուտական շարժումը ժամանակավրէպ չէ, մենք է որ գայն ժամանակավրէպ կը դարձնենք՝ երբ մենք մեզ չենք նորոգեր: Սկաուտական շարժումը մարդակերտումի միջավայր է: Կեանքի պայմանները, դաստիարակութեան միջոցները փոխուած են, հետեւաբար պէտք է օրուան համեմատ

պատշաճեցումներ կատարել մեր ընթացքին մէջ:

Հայակերտումի հարցը միշտ կայ: Ազգային նկարագիր եւ ջիղ պահելու մտահոգութիւնը տեւական է: Այս իմաստով սկաուտական շարժումը միշտ ընելիք ունի: Ան շարժում է, միջոց է եւ ոչ՝ նպատակ: Ամէն շարժում կը պատրաստէ իր միջավայրին համար օգտակար անձեր, մեր պարագային եւս այդ անհրաժեշտութիւնը կայ եւ միշտ պիտի ըլլայ:

Համագումարը քննեց նաեւ սկաուտութեան քանակի եւ որակի հարցը: Նորագոյն տուեալներով, Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի սկաուտական կազմը կը հաշուէ շուրջ 3000 սկաուտ՝ Լիբանանի, Սուրիոյ, Քուէյթի, Իրաքի, Յորդանանի եւ Երուսաղէմի մէջ: Նիւթապաշտ աշխարհի մը մէջ, այս 3000 սկաուտներուն կը փոխանցուի կամաւոր աշխատանքի սէր եւ մղում: Տեղ-տեղ կարիքը կը զգացուի աւելի լաւ պատրաստուած խմբապետներու, որոնք կարենան յաւելեալ ժամանակ եւ գիտելիք տալ իրենց վստահուած սերունդներուն:

Համագումարի աշխատանքներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը յատուկ նիստով մը քննեց ու հաստատեց ժողովականներուն կողմէ իրեն ներկայացուած առաջարկները եւ առ այդ՝ որոշեց յառաջացնել խմբապետական գործադիր կազմ մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ ծրագրել եւ կազմակերպել յառաջիկայ աշնան Սուրիոյ մէջ տեղի ունենալիք խմբապետներու պատրաստութեան դասընթացքը:

FREDDY KARAGEUZIAN

"ONNIG OF CAIRO"
Egyptian Museum

Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՀԵՏ - «ՄԱՐԴ ԿԱՅ, ՄԱՐԴ ԷԼ ԿԱՅ»

Տոբթ. Միսաք Արզումանեան
ՍԱՆ ԽՈՍԷ

1 970ական թուականներու առաջին կիսուն, Հ.Մ.Լ.Մ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան մաս կազմած չրջանիս, իրերու բարեղէպ դասաւորումով մը, պատեհութիւնը ունեցայ ծանօթանալու 20րդ դարու հայ կեանքին մէջ նուիրումի ճամբով տիրական դէմք դարձած Ալեք Մանուկեանին, որ Սփիւռքի բազմաթիւ գաղթօճախներուն ու հայրենիքի մէջ բարձրացուցած կոթողային կառոյցներուն վրայ (դպրոց, մարզամշակութային համալիր, Կաթողիկոսարանի վեհարան, հանդիսասարահ) աւելցուցած էր Պէյրութի մէջ նոր կեդրոն մը, եւ եկած էր Լիբանան, իբրեւ Հ.Բ.Լ.Մ-ի այդ օրերու նախագահ, ներկայ գտնուելու բացման հանդիսութեան, այցելելու միութեան եւ անոր ուղեկից կրթական, մշակութային, մարզական միաւորներու ցանցը, եւ ի պատիւ իրեն կազմակերպուած բազմաբնոյթ ձեռնարկները հովանաւորելու:

Ի պաշտօնէ, իր կողմէ տրուած այցելութիւնները եւ ունեցած լայնածիր տեսակցութիւնները, ի պատիւ իրեն սարքուած մեծարանքի բազմամակարդակ ձեռնարկները ստեղծեցին խանդավառութեան ուշագրաւ մթնոլորտ, յատկապէս Հ.Բ.Լ.Մ-ի չրջանակներուն մէջ: Մթնոլորտ, որուն բարձրակէտը դարձաւ Լիբանանի նախագահին տրուած այցելութիւնը եւ պետական յատուկ պատուանշանի արժանանալը:

Չեմ գիտեր, բարի նախանձի՞ մը արդիւնք եղաւ թէ ենթագիտակցական արդարադատ արժեւորումի, մտածեցի որ ինչո՞ւ մենք ալ իբրեւ հայոց պատմութեան արժանաւոր ու մեծագոյն դէմքերուն հանդէպ յարգանք ունեցող բարոյադաւան կազմակերպութիւն, Հ.Մ.Լ.Մ.ադրոշմ ձեռնարկով մը չմեծարենք Հ.Բ.Լ.Մ-ի արժանաւոր նախագահը:

Մտածումս յայտնեցի մեր ատենապետ՝ եղբ. Յովհաննէս Շահինեանին, որ իւրացնելով գայն, բերաւ այդ շաբթուան վարչական նիստին, ուր եւս միաձայնութեամբ ընդունուեցաւ եւ անոր կենսաւորումը վստահուեցաւ դիւանին, այսինքն՝ եղբ. Շահինեանին եւ ինծի:

Բնականաբար, մեր առաջին գործը պէտք է ըլլար հե-



1971. Ալեք Մանուկեանի այցելութիւնը Լիբանանի նախագահ Սիւլէյման Ֆրէճօնի:

տաքըրուելի ու գտնել յարգելի հիւրին այցելութիւններով եւ տեսակցութիւններով զբաղող պատասխանատու յանձնախումբը, եւ այդ «պատկան» մարմնէն ապահովել դրական կեցուածք...:

ՔՈՔՕՒՅԼԻ ՀՐԱՒԵՐ

Պատահեցաւ, որ ժողովին յաջորդ օրը, վերոնշեալ յանձնախումբէն մեզի հասաւ «Հ.Բ.Լ.Մ-ի նորաշէն կեդրոնի բացման» քոքթէյլի գոյգ մը հրաւէր:

Հ.Մ.Լ.Մ-ը այդ ձեռնարկին ներկայացնելու պարտականութիւնն ալ յանձնուեցաւ ատենապետ-փոխ ատենապետ գոյգին:

Յետ խորհրդակցութեան, եղբ. Շահինեանին հետ թուեցաւ մեզի որ մեր առաջարկը, ե՞րբ, ի՞նչպէս ներկայացնելու հարցերը ինքնաբերաբար կրնան լուծուել քոքթէյլին ընթացքին, ընդունելով որ Բարեգործականի ղեկավար դասը ի պաշտօնէ ներկայ կ'ըլլայ հաւաքին:

Այս մտածումով յուսադրուած՝ եղբ. Շահինեան յիշեց այդ ղեկավարներէն իրեն արհեստակից եւ բարեկամ անձի մը անունը, եւ վստահեցուց զիս, որ եթէ զինք գտնենք, մեր փառքը անպայման կ'իրականանայ:

Օրին, ձեռնարկին ժամը բժախնդրութեամբ յարգեցինք,

հասանք նորակառույց շէնքը, բարձրացանք ուղեները ներով ճշդուած մասնաբաժին մը եւ մեր դիմաց տեսանք տօնական միջնորդարտի մէջ երթեւեկող խումբ-խումբ կոչնականներ:

Արդէն գործի վրայ էին նաեւ խմիչք եւ աղանդեր մատուցողներ, մենք ալ հետեւելով ներկաներուն օրինակին, վերցուցինք մէկական գաւաթ եւ աջ ու ձախ դիտելով, ծանօթ դէմքի մը ժամանումին սպասեցինք:

Շատ չտեսեց մեր «փնտռտուքը», նոր եկող մը նշմարելով, եղբւ. Շահինեան «աւետեց» որ իր յիշած բարեկամը հասաւ. ու ինք սկսաւ քալել անոր ուղղութեամբ:

Հետեւեցայ իրեն, եւ նորեկ բարեկամին հետ ծանօթացայ:

Շնորհաւորական եւ յաւուր պատշաճի աւանդական արտայայտութիւններու բաժինը աւարտելէ ետք, եղբայր ատենապետը անցաւ «գործի»...:

Բարեկամական լեզուով յայտնեց նախ մեր բաղձանքը, եւ ուզեց գիտնալ, թէ որո՞ւ պէտք էր հասցնէինք մեր հայցը:

Չէինք ակնկալեր որ այդքան արագ ու կտրուկ «կարելի չէ» մը պիտի ըլլար մեզի տրուելիք պատասխանը:

Չբաւարարուելով ըստածէն, համարձակեցայ հարցնել պատճառը եւ բնութիւնը յայտարարուած արգելքին:

Բացատրուեցաւ, որ պրն. Մանուկեանի Լիբանան ժամանումէն շատ առաջ իր օրերն ու ժամերը գրաւուած են եւ իր յուշատետրին մէջ նոր ժամագրութիւններու տեղ չէ մնացած...:

Չէի գոհացած տակաւին եւ վրդովուժմ ծածկելով յարեցի. «ոչ մէկ ակնկալութիւն ունինք մեծայարգ բարերարէն, կ'ուզենք միայն մեծարել Մեծ Հայը...»:

Ուրիշ ըսելիք չունենալով՝ «բարեկամական» կեղծ քաղաքավարութեամբ մը հեռացաւ մեր խօսակիցը:

Եւ մենք անխօս, պարպեցինք քոթէյլի մեր գաւաթները...: Յետ այնու պատահածը չեմ յիշեր. անդրադարձայ միայն որ ձեռնարկին պաշտօնական բաժինը աւարտած էր եւ մեկնողներ կային, ու մենք կը հետեւէինք անոնց:

Մինչեւ այսօր համոզուած եմ, որ եթէ մեր ատենապետին «բարեկամ»ը ուզէր օգտակար ըլլալ, կրնար հաւանաբար մեր խնդիրը լուծել: Դժբախտաբար, բարեկամութիւն իմաստաւորող ոչ մէկ բան տեսայ դէմքին վրայ եւ խօսելուծին մէջ: Եւ երկու օր վրդովուժով անցուցի:

Երրորդ օրը, նախախնամական կարգադրութեամբ մը, անակնկալ հանդիպում մը պիտի չըլլէր հոգեվիճակս:

Արդարեւ, պրն. Ալեք Մանուկեանին ընկերացած չքախումբով Պէյրութ եկած էր նաեւ անցեալի մտերիմ դասընկերս՝ տղթ. Գէորգ Քէշիշեանը:

Վերոյիշեալ հանդիպումը տեղի ունեցաւ Պուրճ Համուտի մէջ, երբ օր մը անցեալը յիշելով եկած էր քաղաքապետարան եւ ուզած էր տեսնել զիս:

Դարմանատուն հասած, երբ հագիւ սկսած էի օրուան



Տէր եւ տիկին Մանուկեաններ Մեծի Տանն Կիլիկիոյ Խորէն Ա. Կաթողիկոսին հետ, Անթիլիաս:

հիւանդները ընդունելու, հիւանդապահուհին յայտնեց որ ինծի «ծանօթ» անձ մը կը փափաքի զիս տեսնել:

Դադար տուի աշխատանքս, դուրս եկայ քննութեանց սենեակէն ու պահ մը շուարուն դիտելէ ետք «ծանօթս»՝ թեւատարած ներս առի զինք: Եկողը ինքը՝ տղթ. Քէշիշեանն էր:

Բնականաբար յիշեցինք անցեալը, խօսեցանք ներկային մասին:

Անցեալը մեզ տարաւ Ֆրանսական համալսարան, ուր ես Լիբանանէն, ինքը Հայէպէն, ետք տարիներ բժշկութեան եօթնամեայ շրջանին ուսանող եղած էինք եւ նոյն ատեն աւարտած բժշկական ուսումնառութիւնը:

Բնութագրելու համար մեր «ընկերութիւնը» կ'ուզեմ արձանագրել յատկապէս, որ ազգային գաղափարախօսական տարբեր թեւերու պատկանելով հանդերձ, ես՝ ազգային-թեմական եւ Հ.Մ.Ը.Մ.ական եռագոյնադաւան հաւաքականութեան, ինքը՝ Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.Մ.-ի գաղափարական կառույցներուն մէջ, երկուքս ալ ազգային-հանրային ծառայութիւնը մեծապէս կարեւորելով, ապրած էինք յիշատակելի եօթնամեայ շրջան մը, իրարհասկացողութեամբ եւ առաւելագոյն փափկանկատութիւններով կազմուած դասընկերութիւն:

Հրաւիրեցի զինք ու տիկինը իրենց գաւաթներով, ընտանեկան եղբայրական ճաշի, նոյն շաբթուան Կիրակին:

Օրին, ճաշի ընթացքին տեղի ունեցած խօսակցութիւնները, բնականաբար, մեզ հասցուցին իրենց քոթէյլի ու առիթը անցանքս գանգատի շեշտով մը անդրադառնալու մեր անկատար մնացած «տենչին»...

Տղթ. Գէորգ կտրելով խօսքս զիս մեղադրեց, որ ինքը Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ ըլլայ, այդ հանգամանքով ալ նախազահական շքախումբով գտնուի Լիբանան, ու ես անտեսեմ զինքը եւ դիմեմ ուրիշ հասցէի...:

Հարց տուաւ, թէ տակաւին կը մտածուէ՞ր հրաւիրին մասին եւ կ'ուզե՞մ որ միջամտէ առ որ անկ է եւ կենսաւորէ բաղձանքս...:

Դրական պատասխանիս վրայ, յանձն առաւ նոյն օրը պրն. Ալեք Մանուկեանին հասցնել փափաքը եւ յաջորդ առաւօտուն իսկ մեզի փոխանցել ստացած արդիւնքը:

Դրական ելքի մը նորաբորբ յոյսով սպասեցի յաջորդ օրուան... որ չուշացաւ:

Երկուշաբթի առաւօտուն հնչեց հեռախօսին զանգը. տոքթ. Գէորգն էր որ կը բարեւէր գեղգեղուն ձայնով, եւ կը հարցնէր «Կրնա՞ք ժամը Աին «Յենիսիա» պանդոկը ըլլալ»: Աւելցուց, որ մուտքին իրենց տղաներէն մէկը կը դիմաւորէ մեզի: Կասկած չկար, որ յաջողութեամբ գլուխ հանած էր իր յանձնառութիւնը եւ առիթ ալ չտուաւ որ շնորհակալութիւն յայտնեմ իրեն:

Լուրը փոխանցեցի մեր ատենապետին, որ ուրախացաւ. ուզեց գիտնալ ո՞ր ճամբով ձեռք բերի այդ «բանալին»: Ժամանակ չանցընելու մտքով թելադրեցի, որ պատրաստ ըլլայ, քանի ես ճամբայ կ'ելլեմ դէպի քաղաքամէջ, եւ իր ընկերակցութեամբ պէտք է հասնինք ժամադրութեան:

Արդարեւ, մեզի փոխանցուած ժամկէտէն տասը վայրկեան առաջ հասանք պանդոկ...: Հայերէն խօսելով, մօտեցանք վերելակներու բաժինը, ուր գտանք երիտասարդ մը, որ ժպիտով ու հայերէնով հարցուց (մեր խօսակցութենէն բան մը հասած ըլլալու էր իրեն):

- Ինչո՞վ օգտակար կրնամ ըլլալ ձեզի:

Հարցումը յստակ էր, պատասխանեցինք որ ժամադրութիւն մը ունինք Հ.Բ.Լ.Մ.ի նախագահին հետ:

Հարցուց.- Ո՞վ կ'ըլլաք: Տուինք մեր անուններն ու համարները:

Ձեռքին ունէր այցելութիւններու անունացանկ յուշագիր: Իր պարտականութիւնը բժախնդրօրէն կատարել ուզող երիտասարդը թերթեց ձեռքի ժամանակագիր ցուցակը եւ յայտնեց որ դժբախտաբար մեր ըսածին համապատասխան արձանագրութիւն չի տեսներ հոն...

Իբրեւ յաւելեալ տեղեկութիւն, հաղորդեցի որ տոքթ. Գէորգ Քէշիշեան երէկ գիշեր անձամբ ապահոված է այս տեսակցութիւնը եւ ճշդուած ժամանակը: Բացայայտելով նաեւ որ մենք դասընկերներ եղած ենք:

Պահ մը մտածելէ ետք, խնդրեց որ հետը բարձրանանք վերելակ, ու երթանք ընդունելութեանց յարկը, հարցը աղբիւրէն յստակացնելու համար:

Ելանք, մտանք սենեակէ մը ներս, ուր մեր առաջնորդը մօտեցաւ գրասեղանի մը ետին նստած պատասխանատուի մը... ուր հաստատուեցաւ որ մեր ըսածները վաւերական են եւ մեզի առաջնորդ եղած երիտասարդը վերադարձաւ իր «գործին»:

Քանի մը վայրկեան վերջ, ներքնասենեակէ մը դուրս ելան մեզի նախորդած այցելուներ, եւ մինչեւ դուռը հասած պրն. Մանուկեանը ներս առաւ մեզ:

Յստակ եղաւ որ մեծայարգ նախագահին օրուան յայտագիրը կարելի չափով խճողուած էր, եւ այդ գիտակցութեամբ



Տէր եւ տիկին Մանուկեաններ Հ.Բ.Լ.Մ.ի Յովակիմեան-Մանուկեան եւ Դարոմի Յակոբեան վարժարաններու աշակերտութեան արուեստի ցուցահանդէսին:

արագօրէն անցանք բարի գալուստի եւ շնորհաւորութիւններու խօսքի բաժինը...:

Շեշտեցինք իրեն հանդէպ մեր տածած յարգանքի զգացումները, ներկայացուցինք զինք մեծարելու մեր ցանկութիւնը եւ քանի մը բառով ուզեցինք մեր կազմակերպութիւնը իր անցելով եւ ներկայով ծանօթացնել իրեն:

Շնորհակալութիւն յայտնեց մեր մտածումին համար, հաստատեց որ շատ ծանրաբեռնուած օրեր կ'անցընէ, այլապէս շատ հաճոյքով կ'ուզէր այցելել մեր կեդրոնը...: Աւելցուց որ ինք լաւ ծանօթ է մեր միութեան գործին եւ խոստացաւ Լիբանան յաջորդ այցելութեան մեզի հետ ըլլալ...:

Զարմացուց մեզ, յայտնելով որ ինք Իգմիլի մէջ Հ.Մ.Լ.-Մ.ի սկառու եղած է մանկութեանը եւ մեծապէս կը գնահատէ Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքները...:

Գոհունակութեամբ հրաժեշտ առինք պրն. Ալեք Մանուկեանէն, որ այդ օր փաստեց, թէ միայն ազգասէր ու բարերար մեծութիւն մը չէ, այլ՝ ազգային բոլոր արժէքները գնահատել գիտցող, համահայկական մեծարանքի արդարօրէն արժանի՝ գլխազիր Մարդ:

Պատիւ զգացի այդ օր ճանչցած ըլլալու դէմք մը, որ Հ.Բ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ճամբով, ազգային լայնածաւալ ծառայութիւններ մատուցանելով հանդերձ, եղած է նաեւ Հ.Մ.Լ.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին հարազատ ու օրինակելի խորհրդանիշը:

ՄՏԱՅԱՆՔ

«ՄԻՓԱՆ 25 ԱՄԵԱԿ»

Հայ Մշակութային «Միփան» Միութեան հիմնադրութեան եւ գործունէութեան 25ամեակի հատոր, Թեհրան, 1989:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

- Թ. -

«9. Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին ֆիզիքականը որքան կը պատկանի իրեն՝ նույնքան կը պատկանի իր միութեան: Ան կը գուրգուրայ իր ֆիզիքական առողջութեան եւ մարքրութեան՝ հետո քանդիչ մոլութիւններէ»:

Պետրոս Շեմսեան ՊԷՅՐՈՒԹ

«Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»:
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՌԱՄ

Ժողովրդային առածները ընդհանրապէս հիմնուած կ'ըլլան երկար տարիներու եւ նոյնիսկ դարերու վրայ հիմնուած փորձառութեան վրայ: Հետեւաբար, անոնց արձակած պատգամներուն ճշգրտութիւնը անվիճելի է:

Պատգամը յստակ է. «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»: Մարմինը մարդու մտքին եւ հոգիին պաշտպանն է: Երբ առողջ չէ մարմինը, տոկուն չէ ան, առաջին իսկ հարուածէն տեղի կու տայ ու կը փլի՝ իր հետ տանելով մարդու մը ամբողջ հարստութիւնը՝ միտքն ու հոգին: Արդարեւ, կարելի չէ



պատկերացնել Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ մը, որ իր ֆիզիքական առողջութիւնը անտեսելով, ապրի կեանք մը որ անյարիր է Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական սկզբունքներուն եւ իր առողջութեան: Շատ բնական է, որ վատառողջ ֆիզիքականով մարզիկ մը թաւալլոր պիտի ընթանայ պարտութենէ պարտութիւն: Սրբումները կ'ունենան նախորօք ճշգուած ժամանակացոյց, հետեւաբար մարզիկ մը պատրաստ պէտք է ըլլայ տոկալու մրցումի մը պարտադրած գեր-յողութեան:

Մարզիկի մը առողջութեան վերաբերող այս հաստատումը տարրական պահանջ է որեւէ մարզախաղ կիրարկողի համար. իսկ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին համար ան կրկնակի պարտաւորութիւն է, նախ՝ ենթակային համար իբրեւ անհատ մարզիկ, ապա՝ իր պատկանած միութեան համար, որուն բարոյական սկզբունքներուն պահպանման յանձնառու է ան:

Կրնա՞ք երեւակայել Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ մը, որ ապրի ծխամոլ, թմրամոլ կամ գինեմոլ կեանք մը: Նախ իբրեւ մարզիկ ի յառաջագունէ ան ինքզինք դատապարտած կ'ըլլայ ձախողութեան: Ֆիզիքապէս ան չի կրնար տոկալ խաղին

ՏԻՊԱՐ ՄԱՐԶԻԿԸ

Տիպար մարզիկը նկարագրի տեր մարդ կը դառնայ՝ երբ գիտնայ.

- Յաղթել եւ համեստ մնալ,
- Պարտութեան ատեն ժպտուն մնալ,
- Իրիկունք, վերադարձին, միայն մարզական բաներու մասին չխօսիլ,
- Ընդունիլ իրաւարարին բոլոր որոշումները, արդար թէ անարդար, կանոնաւոր թէ անկանոն, յարմար թէ ձախաւեր,
- Զօրաւոր խաղարկութիւն ունենալ՝ առանց կոշտութեան,
- Խաղի ատեն միայն ինքն իր մասին չմտածել, այլ նաեւ՝ ուրիշներուն,
- Վիրաւոր հակառակորդին օգնութեան հասնիլ,
- Մտիկ չընել ամբոխին, այլ՝ իրաւարարին,
- Շնորհաւորել յաղթական հակառակորդը,
- Խաղէն ետք չափաւոր ըլլալ կերակուրներու եւ ըմպելիներու մէջ,
- Հոգեկան արժէքները մարզականէն բարձր դասել:

Ռ. ՔԻՓԼԻՆԿ

պարտադրած ֆիզիքական ծանր պարտադրանքին եւ ինքնաբերաբար խաղէն դուրս կը դրուի: Իսկ եթէ պատահի, եւ դժբախտաբար յաճախ կը պատահի, որ կարգ մը ակումբներ փամանակաւոր յաղթանակներու համար նախընտրեն պահել բարոյագուրկ եւ վատառողջ մարզիկներ, Հ.Մ.Ը.Մ.ի համար այդ մէկը անկարելի է, որովհետեւ անբարոյ եւ իր ֆիզիքականին առողջութիւնը անտեսող մարզիկներ չեն տուար միութեան բարոյական խստապահանջութեան եւ կարգ ու կանոնին:



Միջազգային տարողութեամբ այս վտանգին դէմ աշխարհը կը պայքարի, որպէսզի նոր սերունդին ֆիզիքականը առողջ մնայ: Նոյն մտահոգութեամբ Հ.Մ.Ը.Մ.ը կը գուրգուրայ իրեն յանձնուած մատղաշ սերունդին վրայ: Ահա թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի մը ֆիզիքականը որքան կը պատկանի իրեն՝ նոյնքան ան կը պատկանի իր մեծ միութեան, որովհետեւ ինքն իր կարգին պարտաւորութիւններ ունի կատարելիք իր միութեան անդամներուն հանդէպ:

Այսօր, աւելի քան ակներեւ է, որ սփիւռքահայութեան տազնապը ուրիշ բան չէ, եթէ ոչ պաշտպանուիլ քանդիչ մոլութեանց դէմ, որոնք աւերներ կը գործեն նոր սերունդի շարքերէն ներս: Ի գուր չէ, որ իրենց գաւակներուն առողջութեամբ մտահոգ ծնողներ իրենց գաւակները կը յանձնեն Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակութեան, որովհետեւ անոնք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ կը տեսնեն ոչ միայն հայապահպանման, հայակերտումի դպրոցը, այլեւ՝ զայն կը տեսնեն նաեւ ու մանաւանդ իրենց գաւակներուն առողջութեան միջնաբերդը, վահանը:

Մարդու մը, յատկապէս մարզիկի մը ֆիզիքական առողջութեան եթէ այսքան մեծ գուրգուրանք կը ցուցաբերուի, անոր համար է որ ան իր կենդանութեան միջնաբերդն է: Փլա՞ծ է, ինկա՞ծ է միջնաբերդը անկենդան է ինքը՝ մարդը, մարզիկը:

Անտիպ: Խմբագրութեան յանձնուած՝ նախքան իր առողջական վիճակին վատթարացումը եւ անողոք մահը:

We Can Light Up A City

G. AYANIAN & SONS
Electricity
Pumps
Lighting
Air Conditioning
Video Phone

— G. AYANIAN & SONS —
BEIRUT

Dora: 01-255 222/3/4/5/6 Gemmayze: 01-447 000 - 447 940 Mobile: 03-627 728/9
Fax: 01-265 187 - 582 357 E-mail: gasons@dm.net.lb www.ayanian.com

Պէյրուքի, Արէնքի եւ Գոքիմիոյ մասնաճիւղերու կողքին, Մարսէյի մասնաճիւղը կը նկատուի միութեան հնագոյններէն: Չորս մասնաճիւղերն ալ հիմնուած են 1924ին, Պոլիսէն ետք Հ.Մ.Ը.Մ.ի փարածման առաջին շրջանները հանդիսանալով:

Հերեւաքար ու բնականաբար հարուար պարմութիւն ունի Հ.Մ.Ը.Մ.-Մարսէյ մինչեւ Մարսէյի «Արծի»ի վերածուիլը եւ 1974ին Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանրէն դուրս մնալը:

Այսօր, վերամիացման առիթով, կ'արժէ լուսարշակի փակ առնել այդ պարմութեան կարեւոր հանգրուանները՝ զանոնք քաղելով Բիւզանդ Թորիկեանի «Պարմութիւն Հայ Մարմնակիրթական Ընդհանուր Միութեան» Բ. եւ Գ. հասրոներու համապարասխան բաժիններէն:



ՀԻՄՆՈՒՄ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի մասնաճիւղը եղած է Ֆրանսայի ամէնէն կենսունակ մասնաճիւղը: 6 Յուլիս 1924ին, Յարուլթիւն Պօղոսեանի այցելութենէն սկսեալ, կը սկսին նախապատրաստական հաւաքներ: Պոլսոյ նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Վազգէն Անդրէասեան, Սուքիաս Սուքիասեան, Վահրամ Ասլանեան, Մկրտիչ Փափագեան եւ Օննիկ Սարաֆեան 21 Օգոստոս 1924ին պաշտօնապէս կը հիմնեն Մարսէյի մասնաճիւղը: Շուտով անոնց շուրջ կը հաւաքուին երիտասարդներ, անդամներու թիւը բարձրացնելով 35ի:

28 Սեպտեմբերին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր առաջին հրապարակային ելոյթը, ուր խօսք կ'առնեն Պոլսոյ նախկին սկաուտ խմբապետներէն Մկրտիչ Մարտիան եւ Օննիկ Եագմաճեան: Հետզհետէ նոր ուժեր կը միանան մասնաճիւղի շարքերուն, որուն սակայն կը պակսի հաւաքավայր-մարզարան մը: Այս նպատակով մասնաճիւղին անդամները իրենց միջոցներով կ'ապահովեն ձմեռնային մարզարան մը, ուր կը ըսկրսին յաճախել: Ֆուլթպոլի փորձերը կը կատարուին Պուլվար Օտտոյի մէջտեղի դաշտին վրայ:

10 Մարտ 1925ին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր առաջին մարզական ելոյթը, Սեպաստոփոլ հրապարակի մարզադաշտին մէջ: Հանդիսութիւնը կը պը-



սակուի մեծ յաջողութեամբ: Մասնաճիւղին 100ի շուրջ անդամները իրենց առաջին վարչութիւնը կ'ընտրեն հետեւեալ կազմով.-

- Ատենապետ- Մկրտիչ Մարտիան
- Փոխ ատենապետ- Սուքիաս Սուքիասեան
- Ատենադպիր- Զարեհ Վարդանեան
- Գանձապահ- Խաչիկ Համբարձումեան
- Խորհրդական- Արմենակ Խրիմեան

Նորակազմ վարչութեան առաջին գործը կ'ըլլայ միութեան պետական ճանաչման ապահովումը: 2 Ապրիլ 1925 թուականի թիւ 4410 պաշտօնագիրով Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի մասնաճիւղը կը ստանայ իր արտօնագիրը: Այնուհետեւ մասնաճիւղը կ'անդամակցի Ֆրանսայի մարզական զանազան ֆետերասիոններուն (Ֆուլթպոլ, աթլետիզմ, լող, հեծելաքշաւ):

Վարչութիւնը մասնաճիւղի պատուոյ նախագահ կը նըշանակէ Յակոբ Կարապետեանը եւ պատուոյ անդամուհի՝ Հուլիսիմէ Յովակիմեանը, որոնց նիւթական եւ բարոյական աջակցութիւնները մեծապէս կը սատարեն մասնաճիւղին յառաջդիմութեան: Կը վարձուի մարզադաշտ մը Մոնֆէրոնի թաղամասին մէջ եւ կը սկսի ֆուլթպոլի, աթլետիզմի, հեծելաքշաւի եւ լողի խումբերուն կազմութիւնը:

Յուլիս 1925ին, մասնաճիւղը կը կազմակերպէ պաշ-

տօնական իր առաջին մարզական ելույթը, հսկողութեամբ՝ Փրանսայի ակթիվիզմի ֆետերասիոնին: Տեղի կ'ունենան ընդհանուր տողանցք, ակթիվիզմի եւ հեծելարշաւի մրցումներ: Մարզական այս ելույթը մասնաճիւղին շուրջ կը հաւաքէ Մարսէյի հայութեան գրեթէ ամբողջութիւնը եւ կը սատարէ անոր լայն ծանօթացման՝ Փրանսական շրջանակներու կողմէ:

Այնուհետեւ, մասնաճիւղին յաջողութիւնները կը ծաւալին մեծաքայլ: Անդամներուն թիւը կը հասնի 200ի:

Մասնաճիւղին հիմնադրութեան առաջին տարեդարձին առիթով կը կազմակերպուի պաշտօնական թէյյասեղան՝ ներկայութեամբ Մարսէյի Կաթողիկոսական Պատուիրակ Պալաքեան Սրբազանին եւ հայ աւագանիին: Ներկաները քաջալերական արտայայտութիւններով կը շնորհաւորեն մասնաճիւղին յաջողութիւնները: Մասնաճիւղին գործադիր վարչութեան կողքին կը կազմուի պատուոյ վարչութիւն մը, հետեւեալ կազմով.-

- Նախագահ- Արամ Թիւրպեան
- Փոխ նախագահ- Տոքթ. Քէչեան
- Ատենադպիր- Արսէն Երէջեան
- Գանձապահ- Միհրան Տէրտէրեան
- Խորհրդական- Յակոբ Կարապետեան
- Պատուիրակ- Վահագն Սաաթեան
- Թեքնիք վարիչ- Մկրտիչ Մալումեան



Եւամսեայ արդիւնաւոր գործունէութենէ ետք, պատուոյ վարչութենէն հրաժարած Արամ Թիւրպեանը կը փոխարինուի Յովհաննէս Սաաթեանով, իսկ Յակոբ Կարապետեանը՝ Հայկազուն Գուլումեանով:

1926ի սկիզբը կը կազմակերպուի մասնաճիւղին իգական բաժինը, Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի շուրջ 75 աշակերտուհիներու մասնակցութեամբ եւ ակթիվիզմի ու պասթիպոլի կիրակումով: Իգական բաժինն ալ կը ստանայ պետական ճանաչում՝ 13 Փետրուար 1926 թուակիր թիւ 304 պաշտօնագիրով:

1926ի Ապրիլին, մասնաճիւղին փայլուն մարզիկներուն ի

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



ուսուցում է կ'ըլլայ 33 յարթանակ, 5 պարտու թիւն եւ 3 հաւասարութիւն: Այս պատուաբեր արդիւնքը պաշտօնապէս կը նուիրագործէ Ֆուլթայրի կազմին յառաջխաղացքը: Երկրորդ խումբը նոյնպէս կ'արձանագրէ յաջող արդիւնքներ:

10 Մարտ 1925ին, մասնաճիւղը կը կազմակերպէ մարզական հրապարակային հանդիսութիւն մը՝ Փարք Տը Սփորը մէջ: Օրուան գլխաւոր մրցումը կ'ըլլայ 5000 մեթր վազքը՝ 15 մարզիկներու մասնակցութեամբ: Առաջին կը հանդիսանայ Ստեփան Մոմճեան:

պատիւ կը կազմակերպուի մրցանակաբաշխութեան հանդէս: Մարզիկներու զարգացման համար կը կազմակերպուի դասախօսական շարք: Տոքթ. Քէչեան պարբերական քննութիւններով կը հսկէ մարզիկներու առողջութեան: 1926ին, մասնաճիւղը կը հաշուէ շուրջ 300 անդամ: Կը վարձուի Սեպաստոփոլ հրապարակի Փարք Տը Սփորը՝ տարեկան 5000 Ֆրանք վարձքով: Փակ մարզարանի գործունէութիւնը կը շարունակուի ըստ առաջնոյն: Երկուշաբթի երեկոները տեղի կ'ունենան մարզական թեքնիք նիւթերու շուրջ դասախօսութիւններ, Զորեքշաբթի երեկոները՝ սկաուտական եւ առողջապահական, իսկ Ուրբաթ երեկոները՝ մարզական եւ կազմակերպչական:

1927ի Ֆուլթայրի առաջին խումբին մաս կը կազմեն Ժ. Տէրտէրեան՝ խմբապետ, Յ. Նորհատեան, Ա. Փափագեան, Ա. Քիպրիթեան, Ա. Գուշակեան, Հ. Գասպեան, Փուլէֆ, Ահրիկեան, Հ. Աթթարեան, Հ. Համբարձումեան, Յ. Տէմիրճեան եւ Վ. Շամբեան:

17 Յուլիս 1927ին, մասնաճիւղը կը կազմակերպէ մարզահանդէս՝ Մարտէյի զանազան ակումբներու մարզիկներու մասնակցութեամբ: Կը կատարուին ռիթմիք մարզանքներ, աթլետիկ մրցանակաբաշխութիւն: Օրուան թագուհին է տիկ. Զ. Կիւլպէնկեան: Թեքնիք արդիւնքները աւելի քան քաջալերական են: Հ.Մ.Լ.Մ. կը խլէ առաջնութիւնը՝ 31 կէտով: Անոր կը յաջորդեն Օլիմփիք Տը Մարտէյ՝ 25 եւ յունական խումբը՝ 15 կէտերով: Մասնաճիւղը կը հաշուէ աւելի քան 70 երկսեռ աթլետ:

Մասնաճիւղը իր սեփական դաշտը կ'ունենայ 1930ին: Դաշտին պաշտօնական բացումը կը կատարուի 26 Սեպտեմբեր 1930ին: Մարզական ճիւղը կը զարգանայ, մինչ սկաուտութիւնը ենթակայ է Հ.Մ.Լ.Մ.-Հայ Արի հակամարտութեան եւ կը յետադիմէ, կարող խմբապետներու բացակայութեան պատճառով:

Ֆուլթայրի կազմը իր յաջողութիւնները շարունակելով, սկիզբի չորրորդ դասակարգի իր դիրքը տարուէ տարի կը բարելաւէ: 1929-1930 տարեշրջանին, ան կը բարձրանայ երկրորդ դասակարգ: Միջանկեալ կը կազմակերպուին պահեստի, կրտսերներու, միջակներու եւ փոքրերու զանազան խումբերը՝ թիւով եօթը: Իւրաքանչիւր կը մասնակցի Ֆրանսայի իր դասակարգի համապատասխան ախոյեանութեան մրցումներուն: Առաջին խումբը կը մասնակցի նաեւ հարաւային Ֆրանսայի զօրաւորագոյն խումբերուն կազմակերպած մրցաշարքերուն եւ բարեկամական մրցումներուն:

9 Յունիս 1934ին, անդամական ընդհանուր ժողովին կողմէ կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով:-

- Ատենապետ- Յովհաննէս Պաղչէճեան
- Ատենադպիր- Մարտիրոս Անդոյեան
- Գանձապահ- Յակոբ Գէորգեան
- Խորհրդականներ- Մկրտիչ Փափագեան եւ Բիւզանդ Փաթիլեան

1930-1931 տարեշրջանին, խումբը կը բարձրանայ Ա. դասակարգ եւ կը մասնակցի Ֆրանսայի ախոյեանութեան մրցաշարքին:

Աթլետիք յանձնախումբի անդամներն են.- Յարութիւն Տէր Մինասեան, Վարդգէս Քէչեճեան եւ Պօղոս: Ֆուլթայրի յանձնախումբին մաս կը կազմեն Հայկ Արզումանեան, Կարապետ Թովմասեան, Կարապետ Տարագճեան, Վարդան Քիւփէլեան եւ Թորգոմ:

Ֆուլթայրի խումբերու յաջողութիւնները կը քաջալերեն իրերայաջորդ վարչութիւնները, որպէսզի նիւթական կարեւոր ներդրումներով Հ.Մ.Լ.Մ. Մարտէյի անունը միշտ բարձր պահեն, միաժամանակ զարգացնելով խաղացողներուն թեքնիք կարողութիւնները: Ա. խումբին ձեռք բերած յաջող արդիւնքները կը կրկնուին կրտսերներու պարագային: Վերջինը, Օլիմփիք Տը Մարտէյի նման զօրաւոր կազմերու հետ իր դասակարգին մէջ հաւասար կը դասուի:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

● Ֆուլթայր

Ֆուլթայրը կը դառնայ մասնաճիւղին մարզական գործունէութեան գլխաւոր առանցքը: Պաշտօնական առաջին խումբին մաս կը կազմեն Հայրապետ Գասպեան, Միմոն Շեհրիկեան, Հրանդ Աթթարեան, Վահան Շամբեան, Յակոբ Նորհատեան, Տիգրան Փափագեան, Անդրանիկ Քէթիպճեան, Անդրանիկ Գուշակեան: Խումբին խմբապետ կը նշանակուի Ժիրայր Տէրտէրեան, իսկ պատասխանատու վարիչ՝ Մկրտիչ Մալումեան:

1925-1926 եղանակին, մասնաճիւղին առաջին խումբը կը մասնակցի Ֆրանսայի ախոյեանութեան մրցաշարքին: Քա-

●Աթլետիզմ

Մարսէյի Հ.Մ.Ը.Մ-ի մարզական գործունէութեան երկրորդ առանցքը կը կազմէ աթլետիզմը: 1925ի Յուլիսէն սկսեալ տեղի կ'ունենան մասնաճիւղին ներքին ախոյեանական մրցումները: Մասնաճիւղին մարզիկներէն ժիրայր Տէրտէրեան կը հանդիսանայ ախոյեան: Յայտագիրին մաս կը կազմեն կարճ եւ երկար վազքեր, արձակումներ եւ ոստումներ: Սեպտեմբերին, մասնաճիւղը կը կազմակերպէ մրցումներ՝ Հ.Մ.Ը.Մ-ի «Club Athletique de Marseille»ի աթլետներու մասնակցութեամբ: Այս խաղերուն ընթացքին ժիրայր Խթիկեան կը բարելաւէ հարաւային Ֆրանսայի գունտ նետելու մրցանիշը՝ 12.21 մեթրով:

1926ի ամրան, Հ.Մ.Ը.Մ-ի աթլետիզմի բաժինը շատ լայն գործունէութիւն կ'ունենայ: 6 Յունիսին, մասնաճիւղը կը կազմակերպէ «Grand Prix Armenian d'Athletisme»՝ Ֆրանսացի, իտալացի, սպանացի եւ հայ 195 աթլետներու մասնակցութեամբ: Ապա, «Championat Etranger»՝ սպանացի, հայ, յոյն, իտալացի, գուրգերիացի եւ պելճիքացիներու մասնակցութեամբ: Հայերը կը տանին ՉախՉախիչ յաղթանակ: Յուլիս 4ին, մասնաճիւղին ներքին ախոյեանութիւններն են: Կը բարելաւուին 9 մրցանիշներ: Օգոստոս 22ին տեղի կ'ունենայ տարուան պաշտօնական մեծագոյն մարզահանդէսը, հովանաւորութեամբ՝ Մարսէյի քաղաքապետին եւ մասնակցութեամբ Փարիզէն ու Նիսէն հրաւիրուած հայ մարզիկներու:



Նոյն օրը տեղի կ'ունենայ «Tour de Marseille» վազքի մրցումը, Հ.Մ.Ը.Մ-ի դաշտին վրայ:

Այսպէս, աթլետիզմի ճիւղը կը շարունակէ իր գործունէութիւնը, ժամանակի ընթացքին տեղի տալով ի նպաստ ֆութպոլին:

●Կոփամարտ

Այս ճիւղին սկիզբի խանդավառ գործունէութեան շուտով վերջ կը տրուի, երբ մասնաճիւղին ղեկավարութիւնը կ'անդրադառնայ որ Հ.Մ.Ը.Մ-ի կոփամարտիկները արհեստավարժ դառնալու ճամբան կը բռնեն:

Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramses Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130



**VARTAN
KAZANDJIAN**



KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com **Joillier-Orfevre Fonde en 1920**



● Հեծելարշալ

Հեծելարշալի ճիւղը եւս սահմանափակ գործունէութիւն ունեցած է, ի բաց առեւալ Հ.Մ.Ը.Մ.ական Սեպուհ Մանտրոյեանի յաջողութիւններէն: Մանտրոյեան 1925ի Փարիզի ողիմպիականին կը շահի առաջնութիւն: Ան մասնաճիւղին մասին խօսիլ կու տայ՝ Ֆրանսացիներու կազմակերպած զանազան մրցաշարքերուն պատուաբեր արդիւնքներ ապահովելով: Արհեստավարժութիւնը հոս եւս կը սահմանափակէ զարգացումը:

ՍԿԱՌՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԷՆՈՒԹԻՒՆ

Մարզականին հետ բաղդատելով, Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունէութիւնը կը մնայ համեստ:

Հիմնադրութեան յաջորդող տարիներու խանդավառ աճը բնական համեմատութեամբ չի յառաջդիմեր: Սկիզբի թիւով 24 հոգինոց սկաուտական կազմը նիւթական դժուար պայմաններու պատճառով կը կաղայ: Ամառնային արշաւներէ եւ բանակումներէ ետք՝ սկաուտական գործունէութիւնը կը դադրի, եւ փոքր սկաուտները ձմեռնային եղանակին կը հետեւին ֆութպոլի կրտսերներու խումբերուն: Այս երկուութիւնը պատճառ կը դառնայ սկաուտական շարժումին տկարացման: Սկիզբը սկաուտական խումբը վարած է Պոլսոյ Գուլէյի որբանոցի սկաուտներէն Անդրանիկ Այանեան:

12 Փետրուար 1928ին, 16 Նորընծայ սկաուտներ, իբրեւ կնքահայրեր, կը մասնակցին Շալթօ Տը Տիէօրի եկեղեցւոյ օժման արարողութեան, ձեռամբ՝ Պալաքեան Եպիսկոպոսին:

1 Յունիս 1930ին, խումբը կը կազմակերպէ հրապարակային սկաուտական հանդէս, ռուսական վարժարանի սրահին մէջ՝ «Camp Victor Hugo»: Խումբին 50 սկաուտները կը ներկայացնեն մարզանքներ, բուրգեր, կենդանի պատկերներ: Հանդէսը կը փակուի Եկաւեան ընտանիքի թէյ-յասեղանով: Խումբին պատասխանատունն է Վարիչ Առաջնորդ Պերճ Ֆարհատեան:

6 Սեպտեմբեր 1930ին, երկօրեայ բանակում մը կը կատարուի դէպի Կարտան, ուր տեղւոյն հայութիւնը

ջերմ ընդունելութիւն կը ցուցաբերէ խումբին: Բանակավայրին մէջ կը կատարուի խարուկահանդէս: Յաջորդ օր, խումբը ներկայ կ'ըլլայ Ս. Պատարագի: Ապա, տեղւոյն Հ.Յ.Դ. սկաուտին մէջ տեղի կ'ունենայ սկաուտական հանդէս: Խօսք կ'առնեն սկաուտական յանձնախումբի անդամ Մկրտիչ Փափագեան եւ Մարսէյի Կաթողիկոսական Պատուիրակ Պալաքեան Եպիսկոպոս: Սկաուտները կը կատարեն մարզանքներ, կենդանի պատկեր, երգ, կատակերգութիւն: Կը կատարուի աստիճաններու տուչութիւն:-

Վարիչ առաջնորդ՝ Վահան Ֆէսեան.

Փոխ Առաջնորդ՝ Գեղամ Պօղոսեան եւ Երուանդ Օհանեան. Փոխ Վեցեակապետ՝ Անդրանիկ Յակոբեան, Աշոտ Վարդանեան եւ Պօղոսիկ Եկաւեան:

Դժբախտաբար, սկաուտական գործունէութեան այս թափը կը դադրի, կարող խմբապետներու բացակայութեան պատճառով: Նաեւ, գործի գլուխ գտնուող անձերը օրինական ձեւով կապ չեն պահեր Փարիզի սկաուտական վերին մարմնին հետ եւ կը թերանան անոր հրահանգներու գործադրութեան մէջ:

Մարսէյի եւ չրջակայքի՝ Պոմոն, Սէն Լու եւ Սէնթ Մարկըրիթ գիւղերու սկաուտներուն ընդհանուր թիւը միայն 65 հոգի է: Այս թիւը կրնար տասնապատուիլ՝ եթէ հետաքրքիր եւ պատրաստուած պատասխանատուներ գտնուէին:

Մասնաճիւղին սկաուտական գործունէութիւնը 1939ին, Բ. Աշխարհամարտի նախօրեակին, անուանական գոյութիւն մը միայն կը պարզէր:

Աշխարհամարտի աւարտին, 1946ին, Մարսէյի մասնաճիւղը կը վերակազմուի քաղաքի արուարձաններու 13 խումբերու միացումով: Այս իրականացման ետին կը գտնուին Մարգիս Ալթունեան եւ գործակիցները, «Նորք» մարզականի պատասխանատուները եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.ի նախագահը՝ Աթթարեան:

Ֆրէզի արուարձանի ֆութպոլի առաջին կազմը կը մասնակցի իր դասակարգի ախոյեանութեան մրցաշարքին: 1948ին, ընդհանուր դասաւորման մէջ ան կը գրաւէ Բ. դիրքը եւ յաջորդ եղանակին կը բարձրանայ Տիվիլիոն Էքսելանս: Կրտսերները կը հասնին իրենց դասակարգի աւարտականին: Քապիլսէյի առաջին խումբը, որ 18 մրցումներէն 14ը աւարտած է յաղթանակով, յաջորդ եղանակին կը բարձրանայ Տիվիլիոն Տ'օնէօր: Սէն Ժերոմի կազմը 18 մրցումներէն 12ը կ'աւարտէ յաղթանակով եւ նոր եղանակին կը բարձրանայ Ա. դասակարգ: Շրջանին մէջ կը գործեն նաեւ Վալպարէյի եւ Պոմոնի Հ.Մ.Ը.Մ.ի խումբ



բերը: Շրջանի խումբերուն ընդհանուր թիւն է տասնմէկ՝ 222 արձանագրուած մարզիկներով:

Տարիներու գործունէութեան այս ընթացքը կը շարունակուի եւ Հ.Մ.Ը.Մ. Մարտէյի ֆուլթպոլի շուրջ կեդրոնացած իր գործունէութեամբ յաճախ խօսիլ կու տայ իր մասին:

1964ին, Հ.Մ.Ը.Մ.ի գանազան դասակարգի խումբերը կը միանան տեղւոյն Արծիւ Մարզական Միութեան համապատասխան, եւ կը շարունակեն գործել Մարտէյի եւ արուարձաններու շրջանակէն ներս՝ Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ» միացեալ անունով:

Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի գործունէութիւնը մերթ փայլուն, մերթ համեստ արդիւնքներով կը շարունակուի հարաւային Ֆրանսայի ֆուլթպոլի ֆետերասիոնին մնայուն անդամակցութեամբ: Սէնթ Անթուան թաղամասին խումբը կը գործէ U.S.J. Armenienne անունով: 1968ին, Մարտէյի Հ.Մ.Ը.Մ.ը կը կազմակերպէ միութեան հիմնադրութեան յիսնամեակի յօբելենական հանդիսութիւն:

Մարտ 1974ին, Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Բիւզանդ Թորիկեան յատուկ առաքելութեամբ կ'այցելէ Մարտէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի պատասխանատուներուն, անոնց ներկայացնելու համար 1974ին կայանայիք համագաղութային Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին եւ կեդրոնական Վարչութեան ստեղծումի պարագաները: Հակառակ հաւաստիացումներու, Մարտէյի Հ.Մ.Ը.Մ.



Մ.ը կը բացակայի վերոյիշեալ ժողովէն եւ մաս չի կազմեր Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցին:

Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի տարիներու ղեկավարութեան մաս կազմած են Րաֆֆի Նազարեան, Աշոտ Վարդանեան եւ ուրիշներ:



**Sarkis
or
Paul**

SASSOUNIAN INC.

Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com E-mail: info@sassouniantools.com

ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ, ԼՈՒՌ ՈՒ ԽՈՆԱՐՀ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ (ԵՂԲ. ԿԱՐՕ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ)



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության անդամ էդր. Կարո Թիրխունճեանի մահուան փարեյիցը հոգեհանգստեան արարողութեամբ մը նշուեցաւ Կիրակի, 21 Յունուար 2007ին, Պուրճ Համուրի Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ:

Հոգեհանգստեան արարողութեան էդր, հոգեստորճի հանդիսութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով՝ արեւնապետ էդր. Յակոբ Քէշիշեան արտասանեց էդր. Կարոյին յիշարակին ոգեկոչման խօսք մը՝ որ կը ներկայացնենք ստորեւ:

Տարի մը անցաւ այն սեւ օրէն, երբ էդր. Կարո Թիրխունճեան կը բաժնուէր իր ընտանիքէն, ընկերներէն ու բարեկամներէն:

Իրաւամբ, ցաւալի է անոր մեծ կորուստը, անհաւատալի ըլլալու չափ, որովհետեւ կեանք, կորով եւ աշխուժութիւն ներշնչող էդր. Կարոն իրաւունք չունէր այսքան շուտ հրաժեշտ տալու մեզի:

Աւելի ճիշդ, նախախնամութիւնը իրաւունք չունէր այսքան շուտ գինք խլելու մեզմէ:

Բայց եւ այնպէս, ո՞վ կընայ փոխել դառն իրականութիւնը, նոյնիսկ եթէ այդ անդարձ մեկնումը եղաւ կանխահաս եւ առանց մնաք բարովի, իսկ մեկնողը եղաւ բոլորին սիրելի անձ մը:


Եւ որովհետեւ իր հարազատ ընտանիքէն դուրս էդր. Կարո կը պատկանէր նաեւ հարազատ այլ կառոյցներու եւ ընտանիքներու, իր մահով լիբանանահայ գաղութը կորսնցուց տիպար հայ մը, հաւատաւոր գաղափարական մը, ուսումնական դաշտի մշակ մը եւ վաստակաշատ ու գործունեայ Հ.Մ.Ը.Մ.ական մը:

Շեշտուած հայրենասէր եւ

Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ ապրեցաւ ու գործեց ի խնդիր հայութեան, իր պատկանած սիրելի միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր նշանաբան՝ «Բարձրացի՛ր բարձրացուր»ին:

Հ.Մ.Ը.Մ. մեզի սորվեցուց այն ինչ որ ամէնէն աւելի կը պակասէր մեզի՝ հպարտութեան վագոնը եւ յաղթանակի ծարարը: Հ.Մ.Ը.Մ. ՅԱՂԹԵՂ ՍՈՐՎԵՅՈՒՅ ՄԵՁԻ: Հ.Մ.Ը.Մ.ի համետ ֆուլթայլիստները իրենց արձանագրած յաղթանակներով եւ շահած բաժակներով միլիոն «Մէ-Մէ» արիւն ներարկեցին ջարդի ու արտորի արհաւիրքէն նոր ելած ու գաղթականի հոգեբանութեան մէջ եղող հապարտոր երիտասարդներուն:

Կ. ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ



Եղբ. Կարո գործեց միութենէն ներս թէ դուրս՝ անշահախնդիր, լուռ ու խոնարհ, միշտ մեծ մնայով իր համեստութեամբ:

Հ.Մ.Ը.Մ. իրեն համար եղաւ մեր «Հինգերորդ հարստութիւնը», իր բառերով՝ «Հ.Մ.Ը.Մ. քոյուքիւն ունի եւ իշխած է աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ, քսանհինգ հազար հաշուող իր անդամներով, Հ.Մ.Ը.Մ. եթէ թագաւորութիւն չէ, կայսրութիւն չէ, բանակ չէ, հապա ի՞նչ է»:

Եղբ. Կարո մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ին, գայլիկական շարքերէն՝ Հայկ-պի մէջ, եւ ապա վարչական պատասխանատուութիւններ ստանձնած է Պէյրութի մէջ, հանգրուան առ հանգրուան բարձրանալով մինչեւ Հ.Մ.Ը.Մ-ի Գերագոյն Մարմին:



Այս բարի, համեստ ու հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ-ականը եւ ազգին կամաւոր ծառայասէրը մեզմէ յաւէտ բաժնուեցաւ, ետին ձգելով առաքինի, պայքարող եւ գաղափարախօս հայու բարի յիշատակներ, որոնք օրինակելի պիտի դառնան իրերայաջորդ սերունդներու:

Վարձքդ կատար սիրելի Կարօ:

Ի՛նչը յարգանք: Խոնկ ու մոմ քու անթառամ յիշատակիդ:

Ամէն բանէ առաջ Հ.Մ.Ը.Մ. եղաւ հայ, այս բառին խորագոյն եւ պարագոյն իմաստով: Հաւատարիմ մնաց մեր ազգային իտէայներուն: Նահատակներու պառակներուն կողմէ հիմնուած՝ իսկապէ՛ս որ ջանաց մեր նահատակներու գաղափարներէն քաղել իր ներշնչումները եւ կեանքի մէջ ըլլայ անոնց անմահ երապին դրօշակակիրը: Իր ամէն մէկ հաւաքոյթը, ժողովը, արշար, բանակումը, մարպական փորձերն անգամ ծառայեցին նորահաս սերունդներու հոգիներուն մէջ վառ պահելու հայու ապրումները: Գուրգուրաց մայրենի բարբառին վրայ, գուրգուրաց մեր աւանդութիւններուն վրայ, աշխատեցաւ իր դրօշին տակ համախմբուած պատանիներու հոգիէն ներս արմատացնել Հայ Եկեղեցւոյ եւ Մայր Հայրենիքի սէրը:

Կ. ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ

BDF ••••

SUD S.A.L. AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂ ԱՅԻՆ 36ԻՂ ՄԱՐԶԱՆՍԱՂԵՐԸ ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԷՋ

Տիրան Շահինեան ՄՈՆԹՐԷԱԼ

24 -26 Նոյեմբեր 2006ին, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի, Վանի Գոյէճի երեք մար-

զարահները եւ Ս. Յակոբ վարժարանի «Հաճէթեան» մարզասրահը ժամադրավայրը դարձան պատգեթպոլի, աթլետիզմի եւ վոլիպոլի Հ.Մ.Ը.Մ.ական սիրահարներուն, որոնք երեք օր շարունակ հաճոյքով հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի միջ-մասնաճիւղային 36րդ մարզախաղերուն:

ՄԱՐԶԱՆՍԱՂԵՐԸ

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Խոտակ Արք. Յակոբեանի հովանաւորութեամբ եւ տէր եւ տիկ. Տիգրան Հաճէթեաներու նախագահութեամբ տեղի ունեցած այս խաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի, Թորոնթոյի, Քէմպրիճի (Գանատայէն), Լոնտոնի (Անգլիայէն), Փրովիտորնսի (Արեւելեան Միացեալ Նահանգներէն) եւ Փասատինայի «Ազատամարտ» եւ Կլէնտէյլի «Արարատ» (Արեւմտեան Միացեալ Նահանգներէն) մասնաճիւղերէն 58 երկսեռ խումբեր, աւելի քան 450 մարզիկ-մարզիկուհիներով:

Խաղերը սկսան 24 Նոյեմբերի կէսօրին, Հ.Մ.Ը.Մ.ական մեծ խանդավառութեամբ: Յաջորդ օր, բազմահարիւր համակիրներու ներկայութեամբ, խաղերը շարունակուեցան բոլոր մարզադաշտերուն մէջ, տօնական մթնոլորտ մը ստեղծելով իրենց շուրջ:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԽՐԱՄԱՃԱՆԲԸ

25 Նոյեմբերի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչութեան ընկերային յանձնախումբին կազմակերպութեամբ տեղի



ունեցաւ յաղթանակի խրախճանք, որուն ներկայ գտնուեցան միջ-մասնաճիւղային մարզախաղերուն մասնակցող մարզիկ-մարզիկուհիները, ոմանք ուրախութիւն ճառագայթող դէմքերով, իսկ ուրիշներ պարտութեան յուսախաբ տրամադրութիւններով: Խրախճանքի սեղաններուն շուրջ սակայն, խանդավառ մթնոլորտը եւ երգն ու պարը բոլորին մոռցնել տուին խաղերուն արդիւնքները եւ զանազան մասնաճիւղերէ քով-քովի եկած քոյր-եղբայրներ Հ.Մ.Ը.Մ.ական հարազատ մթնոլորտի մէջ մտերմացան իրարու, երգեցին ու պարեցին մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆԸ

Մարզախաղերուն վերջին օրը տեղի ունեցաւ փակման մեծաշուք հանդիսութիւն, խուռներամ համակիրներու ներկայութեամբ: Հանդիսութեան ներկայ էին Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գառնիկ Քհչյ. Գոյունեան,



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան խօսքի պահուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան եւ եղբ. Աբրահամ Ահարոնեան (Արժանութիւնէն), խաղերու նախագահ տէր եւ տիկ. Տիգրան Հաճէթեաններ, Հ.Յ.Դ.

Բիւրոյի անդամ Յակոբ Խաչատուրեան, Գանատայի դաշնակցային երեսփոխաններ Մարիա Մուրանի եւ Ստեփան Տիոնի ներկայացուցիչ՝ Ճենյուքա Գահիրօ, նահանգային երեսփոխան Իվան Պորտլո, քաղաքապետական խորհուրդի հայ անդամներ Նուշիկ Էլոյեան եւ Մարի Տերոս, Մոնթրէլի քաղաքապետարանի մարզական բաժնի պատասխանատու Ժոսլին Հատտատ, «Sport Illustrated» թերթի գլխաւոր խմբագիր Ալլաօ Եիւ եւ գաղութի ազգային մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի շեփորախումբին եւ դրօշակակիր 12 արի-արեւոյշներու առաջնորդութեամբ՝ յաջորդաբար տողանցեցին միջ-մասնաճիւղային 36րդ մարզախաղերուն մասնակցող բոլոր խումբերը, արժանանալով ներկաներու բուռն ծափահարութիւններուն:

Ապա, Արա Ալեքսանեանի ղեկավարութեամբ, Համազգայինի «Սանահին» մասնաճիւղին երգչախումբը երգեց Գա-



Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES





Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
 from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt
 Tel: 02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegy.com



նատայի եւ Հայաստանի քայլերգները, որոնց ներկաները հետեւեցան յորըն-կայս:

Օրուան հանդիսավար քոյր Ժիւլի Հինտոյեանի բարի գալուստի խօսքէն ետք, խաղերուն մասնակցող մասնա-ծիւղերուն եւ ներկայ հանդիսականնե-րուն շնորհակալութեան խօսք արտա-սանեց Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Շահինեան: Եղբայրը Հ.Մ.Ը.Մ.-ի առաքելութեան անդրադառնալով ըսաւ. «Ահաւասիկ, 36րդ անգամ ըլլալով, Հ.Մ.Ը.Մ. իր առաքելութեան հաւատարիմ՝ այս փերուն մեզ կը համախմբէ, իբրեւ մէկ եւ նոյն ազգի հարազատ ժառան-գորդներ, իբրեւ մէկ եւ նոյն տեսիլքի հաւատացող անմահ ցեղի զաւակներ, նոյն եւ մէկ ապագայի նայող, նահատակ սակայն յարուցեալ ազգի ախոյեաններ»: Այս առիթով ան նաեւ ըսաւ. «Բոլորիս սիր-տը հպարտութեամբ եւ յաղ-թանակի հրեռանքով կը լեց-ւի ամէն տարի, երբ Հ.Մ.Ը.-Մ.-ի քոյրերն ու եղբայրները, մատղաշ կակուղ թաթիկնե-րէն մինչեւ վեթերան մար-զիկներ մեր դիմաց կը տո-ղանցեն իրենց ամուր քայլե-րով: Եւ ոչ միայն հրեռանե-քով կը լեցնեն մեր հոգիները այսօրուան հաշուոյն, այլ

նաեւ՝ մեր սիրտերը կը լեցնեն ապա-գայ նորանոր յաղթանակներու յոյսով: Գարեգին Նժդեհի խօսքերն են որ կը կրկնեմ. «Եթէ կ'ուզէք գուշակել ժողո-վուրդի մը ապագան, նայեցէք անոր երիտասարդութեան»: Եւ մենք մեր երիտասարդութեան կը նայինք Հ.Մ.Ը.-Մ.-ին ընդմիջէն ու մենք մեզի կը հաս-տատենք, որ եթէ այ՛ս է մեր երիտա-սարդութիւնը, ուրեմն անխուսափելի է որ փայլուն պիտի ըլլայ մեր ապա-գան»:

Եղբայրը գնահատանքի խօսք ուղղեց մարգախաղերուն իրենց մասնակցու-թիւնը բերած մասնաճիւղերու վարչու-թիւններուն, մարզիկներուն եւ մարզի-կուհիներուն, Հ.Մ.Ը.Մ.-ական ոգիով լե-



Տիանա Հանթեան եւ փինկ-փոնկի երեց աղջկանց ասոյեան քոյր Թալին Գազգեան:

ցուն իրենց բարձր մակարդակին ու խաղարկութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսալեան իր կարգին գնահատանքի խօսք ուղղեց մարգախաղերու նախա-գահ տէր եւ տիկ. Տիգրան Հաճէթեան-ներուն, կազմակերպիչ մասնաճիւղին եւ խաղերու յանձնախումբին, որոնց ամիսներու յարատեւ ջանքերուն շնոր-հիւ խաղերը պսակուեցան յաջողու-թեամբ:

Այնուհետեւ, օրուան եզրափակիչ խօսքը արտասանելու հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան: Եղ-բայրը իր խօսքին մէջ դրուատեց Հ.Մ.Ը.Մ.-ի կատարած մեծ դերը, իր 98 մասնաճիւղերով եւ 28 հազար անդամ-ներով, ցրուած՝ աշխարհի 5 ցամաքա-մասերուն մէջ եւ ըսաւ. «Այսօր մենք անհուն գոհունակութեամբ կը դիմա-ւորենք բոլոր մասնակիցները այս մարգախաղերուն, որովհետեւ մեր առաքելութեան հաւատարիմ՝ նման ձեռնարկներ, պատանիներ ու երիտա-սարդներ մէկ յարկի տակ համախմբե-լով կը նպաստեն ազգապահպանման նուիրական գործին, մարգախաղերը օգտագործելով իբրեւ գրախիչ միջոց: Մեզի համար էական է ստեղծել հայա-շունչ մթնոլորտ, հաւատարիմ մնալ մեր ազգին իտեալներուն, գուրգուրալ մեր աւանդութիւններուն եւ պատանի-ներուն հոգիներէն ներս արմատացնել

հայ եկեղեցւոյ, մայր հայրենի-քի, հայ մշակոյթի եւ մարմ-նակրթանքի սերը:

«Կարելի է հաստատօրէն ըսել, թէ Գանատայի շրջանը բծախնդրօրէն կը հետապնդէ այս նպատակները, ստեղծելով երիտասարդներու ներգրաւման ձեռնտու պայմաններ»:

Խօսքերուն յաջորդեց մրցա-նակաբաշխութիւնը: Ներկայ հիւրերուն ձեռամբ բաժակներ եւ մետալներ ստացան յաղթա-կան խումբերն ու մարզիկ-մար-զիկուհիները: Յատկանշական էր պասքեթպոլի կրտսեր տղոց բաժակի տուչութիւնը՝ Մոնթրէ-լի մասնաճիւղի երիցագոյն ան-

դամ, 96 տարեկան եղբայր Հրանդ Տէտէեանի ձեռամբ: Գանատայի Շրջանային Վարչութիւնը իր կողմէ յուշանուէրներ տուաւ խաղերուն մասնակցող մասնաճիւղերու ներկայացուցիչներուն:

Հանդիսութեան պաշտօնական բաժինը փակուեցաւ Քահանայ Հօր «Պահպանիչ»-ը: Ապա, մասնաճիւղին շնորհակալութեամբ եղբ. Արա Յակոբեանի ղեկավարութեամբ հնչեցուց Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը, որուն յոտնկալս մասնակցեցան ներկաները: Աւարտին, տեղի ունեցաւ երէց տղոց պատգեթպոլի աւարտական մրցումը, որ իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ-ի Փրովիտընսի եւ Կլէնտէյլի խումբերը: Երկու խումբերը բաժակին տիրանալու համար տուին իրենց առաւելագոյնը: Մրցումը սկսաւ երկու կող-



Եղբ. Տիրան Ծահիճեան խօսքի պահուն:

մերէն զգուշաւոր, թէեւ Փրովիտընսի տղաքը մրցումին սկիզբէն որոշ առաւելութիւն մը ապահովեցին, բայց աւելի ուշ արձանագրուեցաւ հաւասարութիւններու շարք մը: Մրցումին Բ. կիսախաղին Կլէնտէյլի տղաքը քանի մը յաջող յարձակումներով ձեռք բերին կէտերու առաւելութիւն մը, զոր պահեցին մրցումին ամբողջ տեւողութեան, մըր-

ցակիցին պարտադրելով խաղի իրենց կշռոյթը:

Ի վերջոյ մրցումը աւարտեցաւ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ. Կլէնտէյլի՝ 84-69 արդիւնքով:

Մասնաճիւղին շնորհակալութեամբ երոյթները դադարներուն եւ կիսախաղերուն շնչող մթնոլորտ մը ստեղծեց մարզասրահէն ներս:

Յետմիջօրէին, միջ-մասնաճիւղային Յճրդ մարզախաղերը հասան իրենց աւարտին եւ մարզիկ-մարզիկուհիները իրարմէ բաժնուեցան մեծ գոհունակութեամբ, քիչ մը աւելի ծանօթացած Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի հայաշունչ մթնոլորտին եւ անդամներուն: Անոնք իրենց քաղաքները վերադարձան Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան շունչով, որպէսզի յառաջիկայ տարի, Յճրդ մարզախաղերուն, միասնաբար կրկին ապրին եւ ապրեցնեն այս մթնոլորտը:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY **Armavia**
Արմավիա

Photos: © Yarm Arhuz-Bertrand, Terre vue du Ciel. Licence 075 960031. StudioWIKEN 2007-2005

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



Ձախին՝ Գանատայի Շրջանային Վարչության ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսալեան յուշատախտակ մը կը նուիրէ խաղերու նախագահ տէր եւ տիկ. Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններուն: Աջին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան ֆուտբոլի երէց տղոց ախոյեանութեան բաժակը կը յանձնէ Քէմպրիճի խումբին ներկայացուցիչին:



Ձախին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեան պասքէթբոլի կրտսեր աղջկանց ախոյեանութեան բաժակը կը յանձնէ Թորոնթոյի խումբին: Աջին՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի երիցագոյն անդամ եղբ. Հրանդ Տէտէեան պասքէթբոլի կրտսեր տղոց ախոյեանութեան բաժակը կը յանձնէ Թորոնթոյի խումբին:



Ձախին՝ Հ.Յ.Գ. Բիւրոյի անդամ Յակոբ Խաչատուրեան աթլէթիզմի բաժակը կը յանձնէ Թորոնթոյի մասնաճիւղին: Աջին՝ Եղբ. Վիգէն Աբէլեան ֆուտբոլի երէց աղջկանց ախոյեանութեան բաժակը կը յանձնէ Թորոնթոյի խումբին:



ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՖՈՒԹՊՈՒԼ

Փոքր տղաք
Երեց տղաք
Երեց աղջիկներ

Մոնթրեալ
Քէմպրիճ
Թորոնթո

ՖԼՈՐ ՀԱՔԻ

Երեց տղաք

Մոնթրեալ

ՎՈՒԻՊՈՒԼ

Երեց աղջիկներ

Թորոնթո

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ

Փոքր տղաք
Փոքր աղջիկներ
Կրտսեր տղաք
Երեց աղջիկներ
Երեց տղաք
Վեթերան տղաք

Թորոնթո
Թորոնթո
Մոնթրեալ
Փասատինա
Կլէնտէյլ
Մոնթրեալ

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

Կրտսեր տղաք
Երեց տղաք
Երեց աղջիկներ

Հայկ Թաշճեան (Մոնթրեալ)
Մանուէլ Աֆարեան (Մոնթրեալ)
Թայլին Գազազեան (Քէմպրիճ)

ԱԹԼԵԹԻԶՄ

Փոքր տղոց ախոյեան
Փոքր աղջկանց ախոյեան
Կրտսեր տղոց ախոյեան
Կրտսեր աղջկանց ախոյեան

Սեպուհ Գալուստեան (Մոնթրեալ)
Փամելա Անտոնեան (Մոնթրեալ)
Մորիս Լապուէնտ (Մոնթրեալ)
Նայիրի Մանուկեան (Թորոնթո)

Ախոյեան մասնաճիւղ

Մոնթրեալ

«Fair Play»-ի տխոյոսին
արժանացած մասնաճիւղ

Թորոնթո





ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Լիբանանեան սկառտական կեանքի վաստակաւորներու շարքին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան պարգեւատրուեցաւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան պատասխանատուներուն կողմէ:

Պարգեւատրման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 19 Դեկտեմբեր 2006ին, իսլամական «Մաքասէտ» բարեսիրական միութեան կեդրոնին մէջ, կազմակերպութեամբ՝ պատկան նախարարութեան, գործակցութեամբ՝ Լիբանանի սկառտական Ֆետերասիոնին եւ Լիբանանի արեւոյշներու միութեան:

Այս առիթով, լիբանանեան զանազան միութիւններէ պարգեւատրուեցան սկառտական կեանքի մէջ նուազագոյնը 25 տարուան վաստակ ունեցող 37 դէմքեր, որոնք նախապէս մաս կազմած են Լիբանանի սկառտական Ֆետերասիոնին եւ արժանացած են «Արժանաւորութեան» մետալին:

Եղբ. Շիմշիրեանի եւ իր գործակիցներու պարգեւատրման հանդիսութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Սկրտիչեան, Կարպիս Գապասագալեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան, Շրջանային Սկառտ. Խորհուրդի ատենապետ քոյր Արաքս Գուլաճեան եւ Շրջանային Խմբապետութեան անդամներ: Պաշտօնական հիւրերու շարքին ներկայ էին Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարու-



Ձախին՝ պարգեւատրեալ եղբ. Միհրան Շիմշիրեան:

թեան ժողովրդային կրթութեան բաժանմունքի նախագահ Ֆատիա Հալլալ, Լիբանանի սկառտական Ֆետերասիոնի նախագահ Մուսթաֆա Ապտէլ Ռասուլ, Լիբանանի արեւոյշներու միութեան նախագահ Նուրա Ժարուտի, իսլամական «Մաքասէտ» բարեսիրական միութեան նախագահ Մոհամմէտ Ամին Տաուք, լիբանանեան Ֆետերասիոնի անդամներ, միութիւններու սկառտական եւ խմբապետական կազմերու անդամներ:



ԱՅՑԵԼՈՒՆԵՐ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ
Հ.Մ.Ը.Մ.Ի ՔՈՒԷՅԹԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Թղթակից ՔՈՒԷՅԹ

Անցնող ամիսներուն աշխատանքային այցելութիւններով Քուէյթ գտնուեցան ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Թամար Տէր Պետրոսեան եւ Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի քարտուղար Գրիգոր Տունկեան:

Քուէյթի ազգային մարմիններու հետ իրենց հանդիպումներու շարքին, հիւրերը տեսակցութիւններ ունեցան Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մասնաճիւղի վարչութեան եւ սկառտական կազմի պատասխանատուներուն հետ:

Մասնաճիւղի հաւաքավայր այցելե-



Զախին՝ քոյր Թամար Տէր Պետրոսեան մասնաճիւղի խմբապետական կազմին հետ:
Աջին՝ Գօգօ Տունկեան մասնաճիւղի վարչութեան հետ:

լով, քոյր Թամար Տէր Պետրոսեան մօտէն ծանօթացաւ վարչութեան աշխատանքներուն, ապա սկսեցին կազմին հետ հանդիպում մը ունենալով՝ ան մեծապէս գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի կատարած աշխատանքը գաղութին մէջ: Այս


առիթով սկսեցին սկսեցին ուղղած իր խօսքին մէջ, քոյրը շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը՝ սերունդներու դաստիարակութեան գործին մէջ եւ յաջողութիւն մաղթեց մասնաճիւղի աշխատանքներուն: Իր կարգին, Գրիգոր Տունկեան Հ.

Մ.Ը.Մ.ի հաւաքավայր այցելելով՝ քաջաբերեց սկսեցին իրենց կատարած աշխատանքներուն համար եւ հաստատեց, որ մեծ են ակնկալութիւնները Հ.Մ.Ը.Մ.էն՝ տիպար մարդը եւ յանձնարու հայր կերտելու խմաստով:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique

OPAL DIAL WATCH



Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
 123 Clarence Street
 Sydney 2000
 Australia

Phone: +61 2 9290 2199
 fax: +61 2 9262 1630
 Website: www.classiquewatches.com
 Email: Info@classiquewatches.com



ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՒ ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՄՆԱԿՑԱԾ՝
Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ)



Աւագ Քահանաները, Աթէնքի մօտ Հայաստանի Հանրապետության ղեկավարատան գինուտրական կցորդը եւ պաշտօնատարներ, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուոյ նախագահը եւ պատուոյ սկառուտապետը, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Կ.Խաչի Շրջանային Վարչութիւններու, տեղւոյն թաղային Խորհուրդի,

«Արարատ» մարզական միութեան ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ «Ծառայութեան» շքանշան ստացած եղբայրներ, ծնողներ եւ բազմաթիւ հանդիսականներ:

Քայլերգի ընկերակցութեամբ ըկառուաներու եւ արեւոյշներու տողանցքէն ետք, օրուան հանդիսավար քոյր Գոհար Ալիանաքեան ներկաները հրաւիրեց վայրկեան մը յօտնկալս լուծութեամբ յարգելու յիշատակը մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Ապա, օրուան յայտագիրը ներկա-

Կարպին Գույումճեան ԱԹԷՆՔ

Կիրակի, 19 Նոյեմբեր 2006ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Սկառուտ Խորհուրդը գեղեցիկ գաղափարը ունեցաւ գնահատանքի հանդիսութիւն մը կազմակերպելու ի պատիւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի մասնակցած շրջանի սկառուտներուն:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Զաւարեան» կեդրոնի մարզասրահին մէջ: Սրահին մուտքին, շարքի կանգնած սկառուտներ «պատուի առ»ով կ'ողջունէին եկող հիւրերը:

Սրահէն ներս, պատերուն վրայ գետեղուած էին համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումին մասնակցող երկիրներու դրօշները, իսկ սրահին առաստաղին մէջ ծայրէն միւսը սկառուտական գաւազաններով պատրաստուած էր «կամուրջ» մը, որուն զանազան մասերուն վրայ կային բանակումին մասնակիցներուն իրարու փոխանակած յուշանուէրները:

Հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ յարգած էին Գեղարդ եւ Վարագ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ եւ յատուկ կարգադրութեամբ վերանորոգուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիքսի «Առաքելեան-Կիւտէնեան» մարպաղաշտը: Դաշտին վերանորոգումը իրագործուեցաւ քաղաքապետական ընտրութիւններէն առաջ Աթէնքի քաղաքապետ պրն. Պէխրաքիսի որոշումով եւ թենկածու պրն. Նիքիթաս Գաքլամանիսի ընդառնաշտումով:

Դաշտին յատկանշաւոր եւ հարթակները ամբողջովին վերանորոգուեցան այնպիսի ձեւով, որ դաշտը յարմար տարածութիւն ունենայ պասքէթպոլի պաշտօնական մրցումներու եւ փորձերու համար:

Բոլոր աշխատանքներուն իրագործումը արժեք 80.000 եւրօ: Աշխատանքներուն անմիջական հսկողութիւնը կատարեց Աթէնքի Ա. փոխ քաղաքապետ պրն. Խարիս Աքրիթիսիս, որ միշտ մօտ եղած է Աթէնքի հայկական գաղութին: Աշխատանքներուն իրենց աջակցութիւնը բերին նաեւ Հ.Յ.Դ. Աթէնքի կոմիտէն եւ Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղը:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Աթէնքի քաղաքապետ պրն. Նիքիթաս Գաքլամանիսին, ինչպէս նաեւ պրն. Պէխրաքիսին, այս մեծ աշխատանքին իրենց բերած նպաստին համար:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

յացնելով՝ քոյրը ըսաւ. «Սփիւռքահայ պատանին ու պարմանունին Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ, սկառտական գիտելիքներու կարգին, կը սորվի թէ Հայաստանը իր հայրենիքն է եւ Եռագոյնը՝ հայրենիքի դրօշը: Ան կ'երդնու ծառայել հայրենիքին, պաշտպան կանգնիլ հայրենիքին, արդար իրաւունքներուն, պայքարիլ աշխատանքի մասին ու մանաւանդ՝ պահպանել հայ լեզուն, մշակոյթը, հայու ազգային ոգին ու նկարագիրը»:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին մասին խօսելով, քոյրը ներկայացուց հայրենիքի պատմական ու տեսարժան աշն վայրերը, ուր այցելեցին սկառտները. Գառնի, Գեղարդ, Խոր Վիրապ, Սարգարապատ, Էջմիածին, բերաւոր նահատակներու պանթէոն Միծեռնակաբերդ, Արցախի նահատակներու պանթէոն Եռաբլուր եւ Սեւանայ լիճ: Բացատրութիւններուն ընկերացան մեծ պատանուի վրայ ցուցադրուող նկարներ:

Այս առիթով տեղի ունեցաւ ըսկառտներու եւ արեւոյշներու աստիճաններու տուչութիւն:

Այսպէս, սկառտական պէն կրելու աստիճան ստացան.-

Ֆիքսէն՝ Փիլաֆեան Անոյշ, Շահպազեան Անդրանիկ եւ Եղիշէ, Պարազեան Լուի եւ Գէորգեան Գրիգոր:

Գոքինիայէն՝ Չաքմաքեան Գրիգոր, Միխայիլիտիս Արմէն, Խոճոյեան Մկրտիչ, Գարամանեան Մարինօ, Գույումեան Անաստասիա, Չաքմաքեան Հայկան եւ Տէր Արթինեան Ալիս:

Փոխ խմբապետի աստիճանէ խմբապետի աստիճան ստացան.-

Ֆիքսէն՝ Մինասեան Վիգէն եւ Շահպազեան Անդրանիկ:

Գոքինիայէն՝ Ասիպեան Սիմոն, Չաքմաքեան Գրիգոր, Միխայիլիտիս Արմէն, Տէր Արթինեան Ալիս, Ժամկոչեան Մարիլիկ եւ Մանուկեան Սիլվա:

Ապա, հանդիսավար քոյրը շնորհակալական խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք իրենց անվերապահ աջակցու-


թիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի բանակումի յաջողութեան:

Եղբայր Յարութիւն Մանուկեան կարգաց սկառտական խումբերու երկամեայ գործունէութեան տեղեկագիրը:

Քոյր Գոհար Ալիանաքեան սկառտական շարժումին իր բերած մեծ նպաստին համար պարգևատրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան յուշանուէրով:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պողոս Չոլաքեան բնաբան ունենալով «Բարձրացիր-բարձրացու՛ր»ը ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ի սկառտութիւնը մեր միութեան ողնասիւնն է, անով ապահովուած է մեր միութեան վաղւան շարունակութիւնը:

Դրօշներու վար էջի արարողութեան էտք, բոլորին կողմէ յոտնկայս երգըւած «Յառաջ նահատակ»ով հանդիսութիւնը վերջ գտաւ կազմակերպողներու գնահատական արտայայտութիւններով եւ խանդավառ միջնորդի մէջ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԳԻՂԻՆ ԵՌՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԳԻՂԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թղթակից ՊԱՂՏԱՏ

Պարզե Ասյանեան ՊԱՂՏԱՏ

●ՎՈՒԻՊՈՒ

- Աղջկանց երիտասարդական խումբը հանդիսացաւ Իրաքի երկրորդ: Քոյր Հուրի Խաչատուրեան արժանացաւ լաւագոյն մարզիկուհիի տիտղոսին:
- Աղջկանց մեծերու խումբը հանդիսացաւ Իրաքի երրորդ:
- Վոլիպոլի իսլամական երկիրներու մրցաշարքին (Իրան), Իրաքի ազգային խումբին հետ ելոյթ ունենալով, քոյր Մարալ Միհրանեան տիրացաւ մրցաշարքի լաւագոյն մարզիկուհիի տիտղոսին:



Քոյրը մասնակցեցաւ նաեւ արաբական աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին (Լիբանան) եւ հանդիսացաւ երրորդ:

Յայտնենք, որ մասնաճիւղին վարչութիւնը այցելեց Իրաքի երիտասարդական եւ մարզական հարցերու նախարարին: Նախարարը գնահատեց միութեան արդիւնքները եւ վարչութեան աշխատանքը:

●ՊԱՍՔԵԹՊՈՒ

- Տղոց սկսնակներու խումբը հանդիսացաւ Իրաքի ախոյեան:

●ՔՈՆԿ ՖՈՒ

- Մասնաճիւղը շահեցաւ քոնկ ֆուի ֆետերասիոնին կողմէ կազմակերպուած մրցաշարքին առաջնութիւնը:

●ՓԻՆԿ-ՓՈՆԿ

- Քոյր Մարալ Մատթեոսեան տիրացաւ Իրաքի աղջկանց ախոյեանութեան տիտղոսին:

Հակառակ երկրին քաղաքական եւ ապահովական աննըպաստ պայմաններուն, Հ.Մ.Ը.Մ.Ի Պաղտատի մասնաճիւղը մեծ զոհողութիւններու զնով կը շարունակէ միութեան կողմէ իր ձեռնարկները, որոնց վերջինը՝ եօթեայ բանակումը տեղի ունեցաւ Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան կեդրոնին մէջ, մասնակցութեամբ՝ 75 սկաուտներու (17 երէց, 12 պարմանուհի, 17 արի, 12 արենոյշ, 5 արծուիկ, 4 գայլիկ եւ 8 գայլիկ-արծուիկներու աստիճանաւորներ):



Գիւրջակի արարողութեան պահուն:



Չախին՝ բանակողները դասախօսութեան պահուն: Աջին՝ բանակավայրի ընդհանուր պատկեր:

Բանակումը նուիրուեցաւ Հայաստանի Բ. անկախութեան 15ամեակին: Այս առիթով, բանակումին դասախօսութիւն մը ներկայացուց տոքթ. Վեհունի Մինասեան:

Բանակումը ունեցաւ բաւական ճոխ յայտագիր եւ ընդգրկեց հետեւեալները:-

● Համա-Հ.Մ.Ը.Մ-ական Ցրդ բանակումի նկարներու ցուցադրութիւն:

● Դաստիարակչական զանազան խաղեր:

● Բանակումի խորհրդանշանի եւ պատի թերթի պատրաստութիւն:

● Խարուկահանդէս:

Բանակումին փակման խարուկահանդէսը տեղի ունեցաւ մեծ խանդավառութեամբ: Ներկայ գտնուեցան Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան եւ մասնաճիւղի վարչութեան անդամները, բանակողներու

ծնողներ եւ օտար հիւրեր:

Խարուկահանդէսը սկսաւ «Մեր Հայրենիք» քայլերգով: Ապա, սկսուեցին ներկայացուցիչ կանչեր, երգեր, արտասանութիւններ եւ զաւեչտներ: Աւարտին, տեղի ունեցաւ աստիճանատուութիւն: 3 քոյրեր եւ 2 եղբայրներ արժանացան տասնապետի աստիճանին:

Խարուկահանդէսին յաջորդեց պարու ցնծութիւն՝ ծպտուած եւ դիմակաւոր սկսուեցին կողմէ:



Philippe Photo Trade

Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

Philippe Photo Trade

Assadourian Bros.



1988Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՔԱՅԼԱՐՇԱԲ

Թղթակից ԳԱՄԻՇԼԻ

10 Դեկտեմբեր 2006ի առաջու-

եան, Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլիի մասնաճիւղի Սկառուտական Խորհուրդին նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ քայլարշաւ մը, նուիրուած՝ Սպիտակի 1988ի երկրաշարժի զոհերու յիշատակին: Սկառուտներն ու պատանիները Գամիշլիի կարգ մը շրջանները շրջելով՝ հասան մինչեւ Ս. Յակոբ եկեղեցի, ուր հոգեհանգստեան արարողութեանէ ետք՝ անոնք ուղղուեցան Ազգային Առաջնորդարանի բակ, ուր կը գտնուի զոհերու յիշատակին կառուցուած յուշակոթողը: Սկառուտները իրենց յար-



զանքի տուրքը մատուցեցին երկրաշարժի զոհերու յիշատակին: Յուշակոթողին առջեւ, Մասիս Վրդ-Զօպուեան Տէրունական աղօթք արտասանելով՝ հոգիներու հանգստութիւն

խնդրեց հայ ազգի բոլոր նահատակներուն համար, անոնք ըլլան բնութեան տարերային աղէտներու զոհ գացածներ թէ հայրենիքի պաշտպանութեան համար զոհուածներ: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց սրկառուտներուն եւ պատանիներուն, որոնք իրենց ներկայութեամբ յարգեցին երկրաշարժի զոհերուն յիշատակը: Այնուհետեւ, սկառուտներն ու պատանիները մէկ առ մէկ ծաղիկներ զետեղեցին յուշակոթողին պատուանդանին վրայ: Արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ Հայր Սուրբին «Պահպանիչ»ով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ «ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ» ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇ ՄԻԱԽՈՐԻՆ ԴՊՐՈՑ-ՔԱՆԱԿՈՒՄԸ

Նայիրի Զաքոյեան ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղի «Շառարջ Քրիսեան» արի-արեւոյշ միաւորը 21 եւ 22 Հոկտեմբեր 2006ին դպրոց-բանակում մը կատարեց Քեսապի կազմակերպման կայանին մէջ, մասնակցութեամբ՝ 60 քոյր-եղբայրներու:

Դպրոց-բանակումին նպատակն էր մասնակից քոյրերն ու եղբայրները դուրս հանել դպրոցական ու գործի առօրեային եւ հաճելի մթնոլորտի մէջ ներկայացնել սկառուտական, դաստիարակչական եւ ազգային ծրագիրներ:

Երկօրեայ դպրոց-բանակումին ընթացքին քոյրերն ու եղբայրները միշտ պատրաստ էին կատարելու իրենց լաւագոյ-

նը՝ բանակումին յաջողութիւնը ապահովելու համար:

Դպրոց-բանակումին յայտագիրը կը բաղկանար հիմնական երկու բաժինէ: Առաջինը՝ դաստիարակչական, որուն նիւթերը կը կրէին ազգային եւ սկառուտական բովանդակութիւն: Իսկ երկրորդը՝ դաշտային խաղերու մասնակցիլ, ռէլիի եւ քայլու մրցումներ: Ասոնց կողքին, իւրաքանչիւր մասնակից հիւսեց ձեռքի Եռագոյն կապ մը, որ յիշատակ մնաց դպրոց-բանակումին:

Այս բոլորը եզրափակուեցան խարուկահանդէսով մը: Կրակին շուրջ հաւաքուած խումբերը ներկայացուցին իրենց պատրաստած զաւեչտները, զանազան երգեր ու պարեր:

Ամէնէն յուզիչ բաժինը եղաւ բաժանման պահը, երբ բոլորը միաբերան երգեցին «Յտեսութիւն» երգը, յառաջիկային նման դպրոց-բանակումներու դարձեալ տեսնուելու խոստումով:

ՀԱՒԱՏԱՒՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸՒ ԵՂԲ. ՉԱԻԷՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Մարալ Կէնճոյեան
ԳԱՄԻՇԼԻ

Ամիսներ անցած են արդէն եղբ. Չաւէն Յովհաննէսեանի մահուան: Ժամանակի իմաստով ամիսները երկար տեւողութիւն չեն, սակայն անվերադարձ բաժանումի պարագային իսկապէս ծանր ու երկար են: Դիւրին չէ վեց ամսուան մէջ հաշտուիլ կորուստին հետ մարդու մը, որ աւելի քան 50 տարի գործօն մասնակցութիւն ունեցած է միութեան աշխատանքներուն, հոգևոր ու սրտով:

Եղբ. Չաւէն Յովհաննէսեան ծնած է 1930ին, Արաբունար: Կանուխէն, ընտանեօք փոխադրուած եւ հաստատուած են Գամիշլի, ուր փոքր տարիքէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

Եղբ. Չաւէն Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան ատենապետի պաշտօնը վարած է քանի մը շրջան: Ան ստանձնած է բազմաթիւ պաշտօններ: Եղած է մասնաճիւղին առաջին երէց խմբապետ: Եղած է նաեւ մասնաճիւղին շեփոթախումբի հիմնադիրներէն. գործած է շեփոթախումբին մէջ:

Երկար ժամանակ եղբ. Չաւէն եղած է գաղափարի ծառայող ընկեր: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական ժողովներու եւ միջ-մասնաճիւղային մըրցումներու: Ան իր մասնակցութիւնը բերած է Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ-ի ակումբին կառուցման աշխատանքներուն:

1993ին, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 75ամեակին առիթով կազմակերպուած խրախճանքի մը ընթացքին, եղբ. Չաւէն Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ արժանացած է «Մառայութեան» շքանշանին:

Մինչեւ իր մահը ան շարունակած է իր ծառայութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին:

Դաժան հիւանդութիւնը եւ անողոք մահը յաւէտ խլեցին հաւատաւոր եղբայրը իր սիրելիներէն եւ պաշտած միութեանէն:

Աճիւններդ հանգի՛ստ թող ննջեն ցուրտ հողին տակ, եղբ. Չաւէն: Հողը թեթեւ գայ վրադ:

With the compliments of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.Ի ՔՈՒԷՅԹԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԵԾ ԿՈՐՈՒՍԸ՝ ԵՂԲ. ԳԱՔՐԻԷԼ ԹԱՍԼԱՔԵԱՆ

Սգակիր մը ՊԷՅՐՈՒԹ


«Անձինք նուիրեալք»էն անուն մը եւս պակսեցաւ: Հ.Մ.Ը.Մ.Ի Քուէյթի ընտանիքը խոր կսկիծով հրաժեշտ տուաւ իր հիմնադիր սերունդի լաւագոյն ներկայացուցիչներէն՝ եղբ. Գաբրիէլ Թասլաքեանին, որուն բովանդակ կեանքը՝ Լիբանանէն Քուէյթ, անհատնում ծառայութիւն մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ին, հայ մշակոյթին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ անոնց ճամբով հայ ժողովուրդին:

Եղբ. Գաբրիէլ ծնած էր Պէյրութ, 1944ին: Ան կը պատկանէր սերունդին այն տղոց, որոնք իրենց երիտասարդ տարիքին Քուէյթ հաստատուելով՝ 1970ականներու կէսերուն սկառտական շարժում կը ստեղծեն, երբ Հ.Մ.Ը.Մ. տակաւին կազմակերպական ներկայութիւն չէր այնտեղ:

Արդարեւ, 1975ին, քանի մը նախկին սկառտներու հետ, եղբ. Գաբրիէլ Քուէյթի մէջ հիմը կը դնէ սկառտական խումբի մը: Կը յառաջանայ Սկառտա-Խորհուրդ՝ գլխաւորութեամբ իրեն եւ եղբ. Պետրոս Առաքելեանի: Խորհուրդին մաս կը կազմեն եղբայրներ Միհրան Մարտիրոսեան, Մարտիրոս Մարտիրոսեան, Ներսէս Խաչատուրեան, Քեռի Սարգիսեան, Սամուէլ Քէօզկէրեան եւ Անդրանիկ Գոճապաշեան:



1978. Եղբ. Գաբրիէլ Թասլաքեան աջին:



Զախին՝ Եղբ. Գաբրիէլ Թասլաքեան:

Ամիսներ ետք, այս կազմը կը դառնայ աստիճանաւորական կազմ, խմբապետութեամբ՝ եղբ. Գաբրիէլի: Շուտով, շարժումին կը տրուի Քուէյթի Հայ Արիւնք անունը: 1976-1977 տարեշրջանին կը հիմնուի նաեւ արեւուշական շարժում: Արեւոյշներ սկառտներուն միանալով կը կոչուին Քուէյթի Հայ Արիւնք եւ Արեւոյշներ (Ք.Հ.Ա.Ա.): Ընդհանուր թիւը կը հասնի 400 արի-արեւոյշի:

1978ի սկիզբը, խումբը որ կը գործէր Հ.Մ.Ը.Մ.ի կանոնադրութեամբ, կը ծրագրէ միանալ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին եւ այդ նպատակով կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութեան: Դիմումի նամակը կը ըստորագրեն խմբապետ եղբ. Գաբրիէլ Թասլաքեան եւ քարտուղար եղբ. Յակոբ Բարսեղեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Մարտ 1978ին կ'որոշէ Քուէյթի Հայ Արիւնքը եւ Արեւոյշներու կազմա-

կերպուցումները ընդունելի իբրև միութեան մէջ մասնաճիւղ, լի-իրաւ իրաւասութիւններով եւ պարտաւորութիւններով: Տա-րի մը ետք, մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Պատգամաւորա-կան ժողովին, Նիկոսիա: Եղբ. Գաբրիէլ կը ներկայացնէ մա-սնաճիւղը:

Այնուհետեւ, եղբ. Գաբրիէլ երկար տարիներ մաս կը կազմէ մասնաճիւղին Սկսուտ. Խոր-հուրդին, անվերապահ աջակի-ցը դառնալով յաջորդական վարչութիւններուն:

«Ողն ու ծուծ»ով Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, եղբ. Գաբրիէլ կ'ըլլայ նաեւ նուիրեալ Դաշնակցական մը եւ հայ մշակոյթի ջերմ սպասար-կու մը: Քուէյթի մէջ ան նախաքայլերը կ'առնէ հայ թատրո-նի ստեղծման: Կ'ըլլայ բեմագիր, բեմադրիչ եւ դերասան:

Ազգային կեանքին մէջ ան կը գործէ անշահախնդիր կեր-պով: Մաս կը կազմէ Քուէյթի Ազգային վարժարանի հոգա-բարձութեան, ապա՝ Ազգային Վարչութեան, հուսկ՝ գաղու-



թին մէջ ստեղծուած յանձնախմբային գրեթէ բոլոր կազմե-րուն (Արցախի օժանդակութեան յանձնախումբ, Հայաստանի երկրաշարժի գոհերու օգնութեան յանձնախումբ եւ այլն):

Եղբ. Գաբրիէլ հայր էր երեք մանչ զաւակներու՝ Մեսրոպ, Սեւակ եւ Դրօ: Ան կը մահանայ 29 Նոյեմբեր 2006ին, Քուէյթի մէջ եւ երեք օր ետք կը թաղուի Այնճարի Ազգային գերեզմա-նատան մէջ, Լիբանան:

TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ

ԱՖՀԻԼ  **AFHIL**
Armenian Mutual Fund
 Tel. / Fax: 01 242556 - 242557



ԵՂԲ. ԱՔՐԱՀԱՄ ԳՈՃԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կարպիս Գույումճեան ԱԹԷՆՔ

Հիներէն մէկն ալ գնաց: Նուիրական պարտականութիւն է մեզի գէթ յետ մահու յիշել անոնք որոնք որեւէ ձեռով ազգային մեր ջանքերուն իրենց քրտինքը շողախեցին կամ իրենց կարողութեան ներած չափով օգտակարութիւն մը ընձեռեցին:

Այդպիսիներէն մէկը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիքսի անցեալի գայլիկական վոհմակի խմբապետ եղբայր Աբրահամ Գոճայեանը:

1945ին, երբ վերջ գտաւ Բ. Աշխարհամարտը, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը սկսաւ դարձեալ ծածանիլ Յունաստանի մէջ ու մեր սկառուտ տղաքը գործի անցան: Այսպէս, Ֆիքսին ներս վերակազմուեցան սկառուտական եւ գայլիկական իրարմէ անջատ երկու խումբեր:

Սկիզբը, գայլիկական վոհմակի պատասխանատուն հանգուցեալ եղբայր Կարօ Ճամուզեանը կ'ըլլայ: Եղբ. Կարոյին կը յաջորդէ եղբ. Աբրահամ Գոճայեանը, ու կարելի է ըսել որ եղբ. Կարոյին համապատասխան բեղուն գործունէութիւն կ'ունենայ ան:

Յաջորդաբար, եղբ. Աբրահամ մաս կը կազմէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկառուտ. Խորհուրդին, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ Ֆիքսի Ս. Կարապետ եկեղեցւոյ թաղային խորհուրդին:

Եղբ. Աբրահամ ծնած էր Աթէնք, Ֆիքսի հայոց թաղը,



1960. Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիքսի մասնաճիւղի սկառուտական եւ գայլիկական խումբը: Կեդրոնը՝ խմբապետ եղբ. Աբրահամ Գոճայեան:

1932ին: Յաճախած էր տեղւոյն Ս. Կարապետ եկեղեցի-դպրոց նախակրթարանը: Ամուսնացած էր Լուսի Եաղճեանի հետ եւ բախտաւորուած երկու զաւակով եւ երեք թոռներով:

Վերջին տասնամեակներուն նախ աշխատանքի ու ապա անհանգստութեան պատճառով չէր կարողացած միութենական կեանքին իր մասնակցութիւնը բերել:

Եղբոր յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Ֆիքսի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս.

Տողրամաճեանի եւ քահանայական դասուն: Դազաղը ծածկըւած էր Հ.Մ.Ը.Մ.ի դրօշով: Ծաղկեպսակով մը յուղարկաւորութեան կը մասնակցէին Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի սկառուտական ընդհանուր խմբապետն ու խմբապետուհին: Ներկայ եղան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ սգակիրներ:

Յաւարտ արարողութեան, Առաջնորդ Սրբազանը իր դամբանականով անդրադարձաւ ազգային կեանքին եղբոր ունեցած ներդրումին:

Եղբ. Աբրահամի Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութեան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան:

Ապա, սկառուտներու «Պատրաստ»ով եւ «Պատուի ա՛ռ»ով եղբոր դազաղը սգակիրներու առաջնորդութեամբ փոխադրուեցաւ իր յաւերժական բնակարանը:

Խունկ եւ ծաղիկ քաղցր յիշատակին:

ԵՂԲ. ՊՕՂՈՍ ՕՂԼՈՒԽԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ «ՃԻՆ ՊՕՂՈՍ»

Կարպիս Գույումճեան ԱԹԷՆՔ

Արդար հատուցում մը ու մանաւանդ խղճի հանդարտու-

թիւն մը ապրած պիտի ըլլանք հիներէն մէկուն՝ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Պօղոս Օղլուխեանի կսկծալի մահուան առիթով, իր յիշատակը ոգեկոչող այս քանի մը տողերը պատմութեան յանձնելով:

Եղբայր Պօղոս ծնած էր Կիլիկիա, հաճընցի ընտանիքէ:

Հաճնոյ դիւցազնամարտէն ու Կիլիկիոյ պարպումէն ետք, ընտանեօք կը յաջողին ապաստանիլ Յունաստան եւ կայք հաստատել Ֆիքսի հայ դպր-թակայանը:

Եղբայր Պօղոս փոքր տարիքէն մարմնամարզի նկատմամբ մեծ սէր ունենալով, կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ-ին եւ նախապատերազմեան շրջանին, Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան 1929ի եւ 1933ի Նաւասարդեան մարզախաղերուն, վագքի ու ոստումի մրցումներուն կ'արձանագրէ լաւագոյն արդիւնքներ:

Այնուհետեւ եւ մինչեւ 1952, երբ կեանքի պայմաններու բերմամբ կը դադրէ Արժանթին, ան Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի Ֆութպոլի մայր խումբին կարգապահ ու լաւագոյն յետսպահ խաղացողը կ'ըլլայ եւ իր ճկուն խաղարկութեան համար կը ստանայ «Ճին Պօղոս» մակդիրը:

Վերջին տարիներուն եղբ. Պօղոս կը վերադառնայ Աթէնք, ուր սակայն իր կողակիցը կորսնցնելու դժբախտութիւնը ունենալով, կ'ապրի մենակեաց կեանք մը, մասամբ հեռու ազգային կեանքէն:

Կը մահանայ իր տանը մէջ, առանձինն, 90 տարեկանին: Յարգանք յիշատակին:



1950. Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի ֆութպոլի մայր խումբը:
Ջախէն աջ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գէորգ Յաբէթեան, եղբայրներ Վարդիվառ Էլմէսէքեան, Դանիէլ Դանիէլեան, Պօղոս Օղլուխեան, Կարապետ Յակոբեան, Ժիրայր Հաննէեան, Մկրտիչ Նազարեթեան, Յակոբ Գրիշիքեան, Վրէժ Գալսեան, Գեղամ Սէֆերեան, Միհրան Հաննէեան, Ստեփան Պալեան եւ Գէորգ Ներիսեան:

Jewelry Burs from FOX! All shapes, all sizes! Here are just a few!



2245 E. Colorado Blvd. 104-240
Pasadena, CA 91107 USA
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN
Tel: 626-791-4327
Fax: 626-791-0866

The Diamonds' Choice



ՀԵԹԻԱԹ

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՁԻՆ

Պատրաստեց՝ Սայրի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ

Աղքատ այրի կին մը եւ իր տղան կ'ապրէին խեղճ վիճակի մէջ: Տղան երբ բաւական մեծցաւ, օր մը մօրը հարցուց. «Հայրիկս ի՞նչ գործ կ'ընէր, բնաւ այդ մասին չես խօսած»:

- «Գնա՛ մարագ, կը տեսնես», ըսաւ մայրը:

Տղան մարագ մտաւ, ասդին-անդին նայեցաւ, քննեց շուրջը, բայց բան չտեսաւ:

Բարձրաձայն սկսաւ ինքն իրեն խօսիլ. «Ամէն օր կը մըտնեմ հոս, սակայն հօրս գործը գուշակել տուող ոչինչ տեսած եմ»: Տղան բարկացած կից մը տուաւ պատին եւ ի՛նչ տեսնէ. պատը բացուեցաւ եւ սենեակ մը երեւան եկաւ: «Ինչո՞ւ այս սենեակը նախապէս չեմ տեսած» ըսաւ, ներս մտաւ, տեսաւ ձի մը: Դուրս հանեց, շաբաթներով կերակրեց ու ինամեց գայն:



Օր մըն ալ թամբ մը դրաւ ձիուն վրայ եւ ուզեց փորձել ձին: Հագիւ ձիուն վրայ նստած, զգաց որ ձին կը թռչի: Երբ կանգ առաւ ձին, երիտասարդը ինքզինք գտաւ ամայն

տեղ մը, աղբիւրի մօտ: Գեղեցիկ փետուր մը տեսաւ գետին ինկած:

Ձին խօսեցաւ ու ըսաւ. «Այս փետուրը եթէ առնես՝ պիտի տխրիս, եթէ ձգես՝ դարձեալ պիտի տխրիս»:

Տղան զարմացած էր, որ ձին կը խօսի: Մտածեց, առաւ փետուրը, դրաւ մագերուն մէջ ու շարունակեց ճամբան:

Փետուրէն լոյս կը ճառագայթէր, բայց տղան չէր զգար: Երբ քաղաք մտաւ, ժողովուրդը հիացած կը դիտէր փետուրը: Լուրը հասաւ թագաւորին: Թագաւորը հրամայեց անմիջապէս երիտասարդը իր քով բերել: Տղան տեսաւ, որ թագաւորը սիրեց փետուրը, նուէր տուաւ ու հեռացաւ:

Թագաւորին վեզիրը ըսաւ. «Թագաւոր, եթէ մէկ փետուրը այսքան գեղեցիկ է, այս փետուրը ունեցող թռչունը որքա՞ն գեղեցիկ պիտի ըլլայ»:

«Ճիշդ է, բայց ո՞ր կը գտնուի այդ գեղեցիկ թռչունը», ըսաւ թագաւորը:

Վեզիրը պատասխանեց. «Անկասկած, փետուրը գտնողը կրնայ գտնել նաեւ թռչունը»:

Թագաւորը կանչել տուաւ տղան եւ հրամայեց. «Կը գտնես ու կը բերես այն թռչունը, որուն կը պատկանի այս փետուրը: Եթէ ձախողիս, գլուխդ կտրել կու տամ»:

Տղան, տխուր, պալատէն ելաւ, զնաց ձիուն քով ու պատմեց պատահածը:

«Հոգ մի՛ ըներ, թագաւորէն առատ ցորեն ուզէ, փետուրը գտած աղբիւրիդ մօտ դիզէ ցորենը եւ մէջը պահէ: Այս եղանակին բոլոր թռչունները աղբիւր կու գան ջուր խմելու: Երբ գեղեցիկ փետուրով թռչունը գայ,



բունէ թեւերէն ու տար թագաւորին»,
ըսաւ ձին:

Երիտասարդը ձիուն պատուէրը գործադրեց եւ բունեց թռչունը: Ան այնքան գեղեցիկ էր ու փայլուն, որ գիշեր-ցերեկ կը լուսաւորէր ամբողջ երկիրը: Հիանալի թռչունը նաեւ կը խօսէր:

Վեզիրը մօտեցաւ թագաւորին ու ըսաւ. «Թագաւոր, թարգման մը պէտք է թռչունին ըսածները հասկնալու համար»: Թագաւորը հարցուց, թէ ուրկէ՞ կրնայ թարգման մը գտնել:

«Վստահ որ թռչունը գտնողը թարգմանն ալ կը գտնէ», պատասխանեց վեզիրը:

Թագաւորը կրկին կանչեց տղան ու հրամայեց, որ թարգման մը գտնէ եւ պատրաստ է:

Տղան ձիուն պատմեց պատահածը:

(Շար. 1)

Ի՞նչ կը փափաքիս ըլլալ ԱՊԱԳԱՅԻՆ

ԱՇԽԱՐՀԱԳԵՏ

Աշխարհագէտը կ'ուսումնասիրէ եւ տուեալներ կը հաւաքէ երկիրներու, շրջաններու եւ քաղաքներու մասին: Աշխարհագէտը կը քննէ հետեւեալ երեւոյթները.՝ շրջապատ, փողովուրդ, զբօսաշրջութիւն, քաղաքաշինութիւն, փոխադրութիւն եւ այլն:

Աշխարհագէտը տեղեկութիւններ հաւաքելու համար հարցախոյզներ կը պատրաստէ, կը հաղորդակցի երկրաչափերու եւ քաղաքաշինութեան մասնագէտներու հետ: Ան կը պատրաստէ տեղեկագիրներ եւ կ'առաջարկէ լուծումներ:

Աշխարհագէտը նկարագիրով պէտք է ըլլայ ուսումնասիրող, ճշգրիտ եւ առարկայական:



ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՄԵՂՈՒՆԵՐԸ



Ջելու, ուրիշներ կը հսկեն փեթակը, իսկ մէկ մասն ալ լուր կը բերէ թէ ո՞ր շրջանի ծաղիկները աւելի շատ նեկտար ունին:

●Մեղուները ճանչցուած են իրենց աշխատասիրութեամբ: Մեղուն մէկ օրուան մէջ կ'այցելէ մօտաւորապէս 7 հազար ծաղիկ:

- Մեղուին կեանքը 30-35 օր է:
- Մեղուն մեղր կը շինէ եւ կ'ուտէ:
- Ամրան, մեղուները ձմրան պաշար կը պատրաստեն:
- Մեղուներու տունը կը կոչուի փեթակ:
- Փեթակի աշխատանքները մեղուները կը կատարեն խումբերով. մաս մը կ'աշխատի ծաղիկներէ հիւթ հաւա-



ՀԱՆՇԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Ո՞ր անշունչն է, որ շրջաւոր կ'որսայ:

(Պատասխանը՝ յաջորդիւ:
Նախորդ հանելուկին պատասխանն էր ամպ):





Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, երկու տարիէ ի վեր հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրուիթիւնը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:
«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Զարեհ Գարակիւլիէան, Յակոբ Թոքաթլեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էհրամճեան, Արթո Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճէթեան, Լեւոն Մելքոնեան, Հրանդ Տէտէեան, Արթին Մաժակեան, Արա Իմամէճեան, Պետրոս Պաքրըճեան, Բարգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան եւ Կարապետ Ն. Թոփճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ձորճ Տաթևեան:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Արշակ Չոպանեանի ծածկանունը - Հայ գուսան:
2. Էական բայ - Բարձրաձայն պաղատող:
3. Շուտ ու շատ լացող - Կատարելապես:
4. Տառի մը անունը - Այեր - Յաւելում:
5. Լատին եկեղեցականներու շուրջառ - Ինքնագսպումի եւ խոկումի միջոց:
6. Արական օտար անուն - Բիւզանդական հայագգի կայսր:
7. Հայ նահապետ - Այբուբենէն - Կաքաւազգի թռչուն:
8. Կառավարական - Բագմաթիւ:
9. Փոքրացնող մասնիկ - Գորովասիրտ - Ռամկորէն՝ այո՛:
10. Անձնական դերանուն - Խաղողի եփած քաղցու - Ուշ:
11. Ժողովրդական շրջանային լեզու - Այբուբենէն:
12. Գեղեցիկ նահապետը - 1908ի ողիմպիականները հիւրընկալած երկիրը - Խօսք մտիկ ըրէ:
13. Թաց, խոնաւ - Անգոր:
14. Ուրիշ - Չայնակից գիրեր - Եղանակաւորիչ մակբայ:
15. Լարաւոր հին նուագարան - Արական օտար անուն:
16. Աղբիւր - Բարակ բարակ հոսի:
17. Ֆրանսացի թենիսիւմըն:
18. Սատար - Դաւանանք, հաւատալիք:
19. Վերստին - Պահածոյ ձուկի տեսակ (հակ.):
20. Ափրիկեան երկիր - Փաքիստանի ամէնէն բազմամարդ քաղաքը - Իգական «նա»:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1														
2														
3														
4														
5	↓													
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

1. 2006ի աշխարհի լաւագոյն ֆուլթպոլիստը՝ ըստ «ՖԻՖԱ»-ի:
2. Հայկական աղօթագիրք - Հայ տղայ - Իրերայաջորդ տառեր:
3. Բիծ - Նմանապէս այլ բաներ - Արամազգի դուստրերէն մէկը՝ գլուխը կախ:
4. «Ֆորմիւլա 1»ի պրագիցի մրցավարորդ - Որջ:
5. Կրիկեան լեռնաշղթայ - Արական օտար անուն - Այբուբենէն - Փափաքի՛ր:
6. Շէյքսպիրի երկերէն «... Արքայ» - Դեղ, ճար:
7. Ուռնակ - Ճափոնի մէջ Հայաստանի Ա. Հանրապետութեան դեսպանը - Արական անուն:
8. Արեւելեան տիտղոս - Ողորմիլ - Բանակ - Չայնանիշ:
9. Ողջակէզ - Դրկից գիրեր - Հայոց դպրութեան աստուածը՝ գլուխը կախ - Նորաձեւութեան աշխարհի յայտնի անուններէն:
10. Ստացական ածական - Սեմական ժողովուրդի մը յատուկ - Յուցական ածական:
11. 1952ի ողիմպիականները հիւրընկալած քաղաքը - Օտար երգչուհի - Տեոքրիստ:
12. Միթէ - Կրակարան - Սարմէնի բանաստեղծական երկերէն՝ «... Չայնով»:
13. Տառն - Յատկութիւն - Յեխ, տիղմ:
14. Համարակիր - Խմոր - Էրի եւ Սելոմի եղբայր:
15. Այբուբենէն (հակ.) - Մատակ ձի - Եւրոպական երկիր - Օծէ՛:

ԹԻՒ 159 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1																	
2		Ք	Ա	Լ	Ձ	Ի	Օ						Ի	Մ	Ա		
3			Ա	Տ	Ե	Ա	Ն							Ա	Ր		
4			Ջ	Ի	Ղ	Ի	Կ							Բ	Գ		
5			Ա	Կ	Ս	Ո	Ո							Լ	Ի	Ա	
6			Տ	Բ	Ղ	Ա	Լ							Ն	Ա	Ն	
7			Ա	Ղ	Ո	Ի								Մ	Մ	Ն	Դ
8			Կ	Ա	Ի		Ա	Ի	Ա	Ն	Ա	Կ		Ս	Տ	Ա	Կ
9			Ա	Ր	Գ	Ա	Մ	Ա	Լ	Ի	Թ						Ա
10			Հ	Ա	Ն	Ա	Գ										Հ
11			Ա	Յ	Ս		Ն	Ա	Ր	Բ	Ն	Կ					Ա
12			Տ	Ղ	Ե	Կ											Ո
13			Կ	Ա	Ր	Կ	Ի	Ն									Ի
14			Ք	Ե	Ի	Ի	Ա										Ղ
15			Ե	Լ	Ա	Գ											Ե
16			Ղ	Հ	Յ		Ձ	Ա	Յ	Ն	Է						Յ
17			Ի	Մ	Ս		Յ	Ա	Ն								Ր
18			Կ	Ա	Կ	Ո	Ի	Ղ									Մ
19			Ո	Ր	Ա	Յ		Կ	Ի	Ն	Ա						Է
20			Ն	Ա	Յ		Մ	Է	Կ	Ա	Լ						Տ



Հ.Ա.Ը.Մ.Ի ՄՈՆԹՐՈՒԲԱԿ ԵՒ ԹՈՒՐՆԱԹՅԱՆ ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՋՍԻՍՆԵՐԻ ՄԱՍԻՆԻՍՏՆԵՐԸ